



Ա.ԻՆԻՆ

ՄԵՎՈՎ ՄՊԻՏԱԿԻ ԿՐԱ



087 1

Ի-34

1935
ՊԵՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

23 JUN 2003



Մ. ԻԼԻՆ

28

1...33.

087-1

Ի-34

ար

ՍԵՎՈՎ ՄՊԻՏԱԿԻ ՎՐԱ

A $\frac{8}{75}$ / 1

2100

5106

Փոխադրեց Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



1935

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

Պատասխանատու խմբագիր Ա. Հայրյան
 Հեղինակ խմբագիր Ա. Առետյան
 Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Պավլյան
 Սրբ-ագ իշ Թ. Ախյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կենդանի գիրք	42
Հիշողության ոգնականներ	3
Խոսող իրեր	10
Նկար - գրություն	15
Խորհրդավոր գրեր	20
Տառերի համբողջությունը	29
Մշտնջենական գրքեր	39
Ժապավեն - գիրք	50
Մոմե գիրք	57
Կաշվե գիրք	63
Թղթի հաղթանակը	68
Գրքերի հակառակը	73
	81



784
41

Գլավկոս 8619 Հրատարակ. № 3052 Մատուցորմատ ԲԵ 125x176
 Պատվեր 6244 Տիրութ 4000

Типография им. „Стачки 19021.“ АЧКПТ Ростов-Дон

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ


ԳԼՈՒԽ I.

ԿԵՆԴԱՆԻ ԳԻՐՔ

Ի՞նչ տեսք ունենալու գիրքը. — տպված
 եր տպարանում, գրված գրչով, թանաքով, թրդ-
 թից եր նա, թե մի այլ նյութից, Յեվ յեթե
 այգալիսի գիրք դեռ գոյություն ունի, ապա վեր-
 տեղ կարելի յե գտնել, վեր գրադարանում:

Առաջին գիրքը բոլորովին նման չեղ այժմվա
 գրքին: Նա ունենալ ձեռքեր, վոտքեր: Նա խոսում
 եր, յերգում: Կարճ ասած՝ դա կենդանի գիրք
 եր՝ — մարդ գիրքը:

Այն ժամանակները մարդիկ գրել չգիտեյին:
 Բայց դրա փոխարեն նրանց հիշողությունը շատ
 ավելի զարգացած եր, քան մերը: Ծեր մարդ-
 կանց մեջ նամանավանդ պատահում եյին այն-
 պիսիները, վորոնք կարծես թե իսկական կեն-
 դանի գիրք լինեյին: Նրանք պատմում եյին ան-
 ցած-գնացած հին պատմություններ, վոր լսել
 եյին իրենց մանկության որբերից: Մարդիկ մեռ-
 նում եյին, բայց պատմությունները մնում եյին՝
 անցնելով հորից վորդուն, պապից թոռան: Բեր-
 նեց բերան անցնելով՝ այդ պատմությունները



փոքր առ փոքր փոխվում էին — շատ բան մոռացվում, շատ բան պակասում կամ ավելանում էր։ Ժամանակը հղկում, հարթում էր նրանց, ինչպես հոսող ջուրն է հղկում ու հարթում իր միջի քարերը, շատ անգամ ել մաշում վոջնաչացնում։

Հունաստանում Վոդիսականի և Իլիականի դուրացազներգությունները նախ քան դրանից գրի առնվելը վաղուց, շատ վաղուց էին յերգվում ժողովուրդի մեջ։

Նույնն է յեղել և մեզ մեռ։ Սասունցի Դավթի, Արտավազդի, Վահագնի և ուրիշ շատ ավանդություններ ու դուրացներգություններ յերգելիս են յեղել ժողովրդի մեջ անհիշելի ժամանակներից, մինչև վոր դրանք գրի յեն առնվել։

Պատմիչները, կամ ինչպես հույներն էին շրանց անվանում, Աեդները կեր ու խումի խրախճանքների ժամանակ ամենացանկալի հյուրերն էին։ Ահա նա՝ Աեդը, նստել է նկարագարդ աթոռին ու մեջքը դեմ տվել քարե սյունին։ Նրա քնարը կախված է պատից՝ գլխավերևը։ Խրախճանքը վերջացել է։ Բոլորը կուշտ են և սպասում են յերգի։ Աեդը վերջացնում է քնարը, լարերին զարկում, յերգում ու պատմում իմաստուն Վոդիսականի և քաջ Սթիլեսի մասին։

Վորքան ել լավ լինեյին Աեդների յերգերը, բայց և այնպես մեր գրքերն ավելի լավն են։ Մեզանից ամեն մեկը կարող է մի չնչին գումարով գնել Իլիականը և կարդալ։ Այդ գիրքը մեզանից վոջ հաց կպահանջի. վոջ ջուր և վոջ ել կարող է հիվանդանալ կամ մեռնել։

Այդ առթիվ միտս է գալիս՝

ՄԻ ՊԵՏՄԱՌԹՅՈՒՆ ԿԵՆԴԵՆԻ ԴԻԱԴԵՐԱՆԻ ՄԵՍԻՆ

Շատ հին ժամանակներում Հռոմում ապրում էր մի մարդ՝ Իցելլ անունով։ Այդ մարդու հարստության մասին հրաշքներ էին պատմում։ Իցելլի ապարանքն այնքան էր մեծ, վոր մի ամբողջ քաղաք կտեղավորեր մեջը։

Իցելլի սեղանի շուրջը ամեն ոք հավաքվում էին Հռոմի գիտնական և նշանավոր մարդիկ՝ թվով մոտ յերեք հարյուր հոգի։

Իցելլը հյուրասիրում էր նրանց ամենահամեղ խորտիկներով։ Բայց Հռոմում այդ ժամանակ ըն-

դունված սովորութիւնն եր՝ հյուրերին վոչ միայն լավ պատվել, այլև նրանց ժամանակը հետաքրքրելու հաճելի դարձնել:

Այդ ժամանակ արդեն գոյութիւն ունեւ գրականութիւնը — ձեռագիր գիրքը: Շատերը ժամերով նստում սովորում էին, վորպեսզի հետո խրախճանքների ժամանակ հյուրերին ըզբայեցնեն հետաքրքիր պատմութեամբ, կամ գիտական զրույցներով:

Ամեն ինչ առատութեամբ ունեւ Իցելլան: Միայն մի բան եւ պակասում նրան — գիտութիւնը, խելքը: Նույնիսկ կարգին կարգաւ չեւ կարող: Մարդիկ, վոր հաճույքով էին ճաշում նրա մօտ, թաքուն ծիծաղում էին նրա վրա:

Իցելլն զգում եւ այդ, նա տեսնում եւ, վոր հյուրերը հազիւ էին իրենց ծիծաղը զսպում, յերբ նա մասնակցում եւ լուրջ և գիտական խօսակցութիւններին:

Այդ նա տանել չեւ կարող: Ծուլանում եւ նստել ու սովորել: Աշխատանքի անսովոր եւ: Յերկար մտածելուց հետո՝ ահա թե ինչ հնար գտավ այդ անհաճո գրութիւնից դուրս գալու:

Ապարանքի կառավարիչին հանձնարարեց՝ իր բազմաթիւ ճորտերի միջից ընտրել ամենաընդունակներից և խելօքներից յերկու հարյուր հօգի: Դրանից ամեն մեկը պետք ե անգիր անել վորևէ գիրք: որինակ՝ մեկը պիտի սովորեւ Իլիականը, մյուսը՝ Վոդիսականը և այլն:

Կառավարիչն եւ, ճորտերն եւ շատ ջանք թափեցին, մինչև վոր վերջապես Իցելլի ցան-

կութիւնն իրագործվեց: Նա այժմ բոլորովին կարիք չեւ զգում գիրք կարդալու: Նրա տրամադրութեան տակ կար կենդանի գրադարան: Բավական եւ մի ակնարկ, և ահա պատի մօտ կանգնած ճորտերից մեկը կարտասանեւ պետք յեղած հատվածը: Ծորտերին անվանում էին այն գրքի անունով, վորը նա անգիր գիտեւ: Մեկի սնունը Իլիական եւ, մյուսինը՝ Վոդիսական և այլն:

Իցելլը հասել եւ իր նպատակին: Հոռի խօսակցութեան նյութը յերկար ժամանակ կենդանի գրադարանն եւ:

Սակայն Իցելլի գործերը ձախովեցին: Մի գեղեցիկ որ այնպիսի մի գեպը պատահեց, վորի պատճառով տգետ միլիոնատերն ամբողջ Հոռի ծաղր ու ծանակի առարկան դարձավ:

Փառահեղ ճաշից հետո, ինչպես միշտ, խոսքը դարձավ գիտական նյութերի շուրջը: Ոոտում էին այն մասին, թե հնում մարդիկ ինչպես էին խրախճանքներ սարքում:

— Այդ մասին մի գեղեցիկ հատված կա Իլիականում, — ասաց Իցելլը և ակնարկով իմաց տվեց կառավարչին:

Բայց կառավարիչը փոխանակ նշան տալու ճորտին, վախից դողահար, չոքեց Իցելլի առջև և ասաց. —

— Ներել, տեր, Իլիականի փորն այսօր ցավում ե:

Այս պատմութիւնը տեղի յե ունեցել յերկու հազար տարի սրանից առաջ: Բայց դեռ այժմ

ել, չնայած կան բազմաթիվ գրքեր և գրագր-
րաններ, սակայն մենք չենք բավարարվում առանց
կենդանի գրքի:



Յեթե մենք ամեն բան կարողանային սովո-
րել գրքով, մենք կարիք չեյինք ունենա գալրոց
հաճախելու և լսելու ուսուցչի պատմածներն ու
բացատրությունները: Գրքից վոչինչ չես կարող
հարցնել, իսկ ուսուցչին կարող ես անվերջ հար-
ցեր տալ և բացատրություններ լսել:

Հապա կենդանի լրագիրը, թատրոնը, վորոնք
շատ ավելի աշխուժ են, կենդանի, քան տպագիր
թերթը:

Բայց յեթե կենդանի գիրքն ու լրագիրը մեզ
ողտավետ են, ապա նույնը չի կարելի ասել կեն-
դանի նամակի մասին:

Շատ հին ժամանակները, յերբ մարդիկ գրել
չգիտեյին, չկար իհարկե և փոստ: Յերբ հարկա-
վոր եք վորեւե կարեւոր տեղեկություն հաղորդել,
գրա համար ուղարկում եյին հատուկ սուրհան-
դակ, վորը պետք ե բերանացի հաղորդեր այն,
ինչ վոր հանձնարարված եր իրեն:

Հազիվ թե լիներ այնպիսի մեկը, վոր հանձն
առներ մի քանի հարյուր, կամ թեկուզ տասնյակ
նամակ սովորել և բանավոր հաղորդել: Կամ թե
ի՞նչ կլիներ այն մարդու գրությունը, վոր ուրախ
լուր ստանալու փոխարեն, շատ տխուր լուր և
ստանում, վորովհետեւ լրագրերը շփոթել ե հասցե-
ները, հաղորդելով մեկին այն տխուր լուրը, վոր
մի ուրիշին եր վերաբերում:




ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱԿԱՆՆԵՐ

Հին ժամանակները, յերբ մարդիկ մեզ պես գրել կարգալ չգիտեյին, իրենց համար հնարել էյին ոգնության մի ձև, վոր մինչև այժմ ել պեռ գործածության մեջ եւ Ո՞վ չգիտե, որինակ՝ թաշկինակի ծայրը հանգուցելը, մատին թել կապելը և այլն:

Հանգուցաւոր գրություններ գործածության մեջ են յեղել անցյալներում, յերբ մարդիկ գրել չգիտեյին: Այդպես էյին «գրում» հնում չինացիները, պարսիկները, մեկսիկացիները և շատ ուրիշ ազգեր: Առանձնապես այդ գրության ձևը շատ կատարելագործւած էր Հարավային Ամերիկայի Պերու յերկրամասում: Այժմ իսկ Պերույի բնիկների մեջ շատերը դեռ գիտեն հանգուցի կապի լեզուն:

Հանգուցաւոր նամակի համար վերցնում էյին հաստ թուկ և այդ թուկից կապում տարբեր յերկարությամբ գունավոր բարակ թելեր և այդ թելերը կապում: Յուրաքանչյուր հանգուց, նայած իր տեղին ու ձևին, մի առանձին խոսք միտք

կամ բովանդակություն ուներ: Որինակ, յեթե հանգուցը մոտ էր հաստ թուկին կնշանակեր խրդիրը շատ լուրջ և կարեւոր է, սև հանգուցը նշանակում էր մահ, սպիտակը՝ արծաթ, կարմիրը՝ պատերազմ, դեղինը՝ վոսկի, կանաչը՝ հաց և այլն: Յեթե հանգուցը գունավոր չէր, նշանակում էր թիվ. պարզ հանգուցները՝ տասնյակ, կրկնակին՝ հարյուրակ, յեռակին՝ հազար:



Պերույի բնիկների այդ գրությունը «կվիպու» յեր կոչվում: Պարզ է, վոր այդ այբուբենով կարգալն ախքան ել դյուրին չէր:

Հնդիկների այլ ցեղերի՝ գուրոնների, իրոկեզների մեջ հանգուցաւոր այդ գրությանը փոխաբնութ էյին ծովային խեցիկներից պատրաստւած գուլնգգույն ուլունքները: Նրանք աւշում, հըղկում էյին այդ խեցիկները և շարում թելից:

Յեվ այստեղ ել սե գուլնը չարագուշակ եր՝
մահ, դժբախտություն, սպիտակը՝ խաղաղու-
թյուն, դեղինը՝ վտակի, ոգուտ, կար-
միրը՝ պատերազմ, վտանգ: Այդ գույ-
ները այժմ ել գեռ իրենց նշանակու-
թյունը չեն կորցրել: Սպիտակ գր-
շակը խաղաղություն և նշանակում,
սևը՝ դժբախտություն, կարմիրը՝
ապստամբություն: Ահա թե վոր-
քան հին ծագում ունի մեր կարմիր
դրոշակը:




Նավերի վրա գործածվող փոք-
րիկ գուլնագույն դրոշակներից կազմ-
ված և մի ամբողջ այբուբենարան:
Այդ դրոշակներով նավերը միմյանց
հետ խոսում բացատրվում են:

Յերկաթուղու ազդանշանն ել ժա-
ռագություն և «գուլնավոր նամակ-
ների» շրջանից:

Յերբ հնդիկ ցեղերից մեկը մի այլ
ցեղի մեջ դեսպան եր ուղարկում,
նրան տալիս եր խեցիներից հյուս-
ված մի գոտի, վոր կոչվում եր
«վանալում»:

— Լսեցեք ինձ, ով առաջնորդ-
ներ, և նայեցեք այս խեցիներին:

Այսպես եր սկսում դեսպանը՝
ցույց տալով խեցիներից հյուսված գոտին և
ապա սկսում եր իր ճառը՝ յուրաքանչյուր մի
արտասանած խոսքի հետ ցույց տալով մի խեցի:



Յեվ իրոր, առանց բերանացի բացատրու-
թյան, հեշտ չեր հասկանալ «վանալում»-ը:

Յենթադրենք թելերից մեկի վրա շարքով
շարված են հետևյալ չորս գուլնի խեցիները՝
սպիտակ, դեղին, կարմիր և սև:

Այդ «նամակը» կարելի էլիններ հասկանալ
այսպես. մենք ձեզ հետ կարող ենք դառնալիցել,
յեթե դուք վճարեք մեզ snurf, իսկ յեթե վոչ,
մենք ձեր դեմ պատերազմի դուրս կգանք և բո-
լորիդ կկոտորենք: Բայց նույն այդ նամակը կա-
րելի յե կարգալ բոլորովին ուրիշ կերպ. — մենք
խնդրում ենք խաղաղություն և պատրաստ ենք
վճարելու շատ վոսկի, յեթե պատերազմը շարու-
նեկվելու լինի, մենք կոչնչանանք:

Յեվ վորպեսզի այսպիսի շփոթություն առաջ
չգար, հնդիկներն իրենց այդ նամակը հանձնում
էյին մեկին, վորը գիտեր նրա լեզուն: Նամակը

չեր կարող փոխարինել մարդուն, նա միայն ոգ-
նում եր նրան և հիշեցնում, թե ինչ պիտի ասի:

Հիշողության այդպիսի ոգնական-
ներ շատ կային:

Մինչև այժմ ել սերբ գյուղացի-
ների մեջ գործ է ածվում «հաշիվ»
պահելու մի առանձին ձև. — փոխա-
նակ մրցման ստորագրություն տա-
լու այս կամ այն հաշվի համար,
նրանք փայտի վրա գծում են իրենց
պարտքի գումարի համարանքով գծեր
և այդ փայտը յերկարությամբ մի-
ջից կիսում՝ կիսած փայտից մեկը

վորպես վավերագիր, մնում է պարտապանի,
մյուսը՝ պարտատիրոջ մոտ:

Նույն ձևով որերի հաշիվ եյին պահում,
Որերի այդպիսի հաշիվ կամ որացույց ուներ,
որինակ՝ Ռսբինգոն Կրուզոն անմարդաբնակ
կղզում:



Գ Լ Ո Ւ Խ III.

ԽՈՍՈՂ ԻՐԵՐ

Գոյություն ուներ դեպքերն արձանագրելու,
լուրեր հաղորդելու, «գրելու» ավելի հասարակ
և պարզ ձև:


Յեթե մի ցեղ ուզում եր մի ուրիշ ցեղի պա-
տերազմ հայտարարել, նրան ուղարկում եր նի-
զակ կամ աղեղ՝ Այստեղ արդեն ամեն մեկի հա-
մար պարզ եր, վոր այդ «նվերից» արյան հոտ
է գալիս:

Իսկ յեթե խոսքը խաղաղության մասին եր,
ուղարկում եյին ծխախոտ և ծխամորձ:

Ծխախոտը հնդիկների մեջ միշտ ել խաղա-
ղության նշան եւ Խաղաղության մասին բանակ-
ցություններ վարելու ժամանակ կողմերի առաջ-
նորդները նստում եյին խարույկի շուրջը. դրան-
ցից մեկը վառում եր ծխամորձը, ծխում և
տալիս իր կողքի նստածին, սա յեւ իր հերթին՝
մյուսին:

Յեւ այսպես՝ հանդիսավոր կերպով, խորին
լուրթյուն մեջ, ծխամորձը պտույտ գործելով, խա-
ղաղություն եր դարբնում:

Յերբ մարդիկ գեռեալ զրել չգիտեյին, նրանք իրերից, առարկաներից կազմում էին մի ամբողջ նամակ։ Շատ հին ժամանակներն Սկյութացիք, վոր հնում բնակվում էին հարավային Ռուսաստանում, մի անգամ նամակի փոխարեն պարսիկներին ուղարկում են թռչուն, գորտ, մուկ և հինգ նիզակ։



Այդ տարրորինակ հավաքածույի միտքն այս եր.

«Պարսիկներ, կարող եք դուք թռչել ինչպես թռչուն, թագնվել գետնի տակը փորպես մուկ, թռչկոտել ճահճի մեջ ինչպես գորտ։ Յեթե չեք կարող, մի փորձեք մեզ հետ պատերազմի դուրս գալ։ Մենք ձեզ նիզակահար կանենք, յեթե փորձելու լինեք վտար դնել մեր հողը»։

Ինչ համեմատութիւնն ներկայի և անցյալի դրութեան մեջ... Ինչպես կզգայիք ձեզ, յեթե մի գեղեցիկ որ փոստով ստանայիք մեկ փաթեթ, մեծ սպասելիքներով բանայիք և հանկարծ՝ մեջը սատկած գորտ, կամ դրա նման մի քանի բան գրու-

նեյիք։ Իհարկ ե, այդ բանը դուք կհամարեյիք մի կոպիտ կատակ մեկն ու մեկի կողմից և յերբեք չեյիք մտածի, թե դա կատակ չե, այլ մի շափազանց լուրջ և, յեթե կուզեք, կարևոր նամակ։

Իրերից կազմված նամակը մեզ տարրորինակ ե թվում, այնպես, ինչպես վայրենուն տարրորինակ կթվա զրված մի թուղթ։

Այսպիսի մի վայրենու մասին պատմենք մի փոքրիկ դեպք։

Ժամանակով մի նեղր կար, անունը Սամբու։ Իր կյանքում նա սպիտակ մարդ յերբեք չեր տեսել։ Բայց մի որ Սամբոն տեսնում ե սպիտակ մարդ, այն ել վոչ թե մեկը, այլ շատ։ Սպիտակ մարդիկ յիկան իրենց հողը, հավաքեցին բոլոր յերիտասարդ, առույշ և ուժեղ մարդկանց և տարան հեռու, շատ հեռու — մինչև ծովափ։ Այնտեղ Սամբոյին իր ընկերների հետ միասին նստեցրին մի մեծ տան մեջ, վորը լողում եր ջրի վրա։

Անցավ մի որ, ելի մի որ. շատ ուրիշ որեր ել անցան, մինչև, վերջապես, Սամբոն ցամաք տեսավ։ Բայց այս հողը նման չեր իր մայրենի հողին։

Սամբոյին տարան մի մեծ բարե տուն։ Այնտեղ կային շատ նեղրեր՝ սե, ինչպես ինքն եր, բայց ուրիշ տեղերից։

Սամբոյին տեր դարձավ Ջեկսոն անունով դատավորը, վոր շեկ բխերով մի բարկացկոտ մարդ եր։ Վաղ առավոտից մինչև յերեկո Սամբոն աշխատում եր դատավորի տանը։



Մի անգամ տիրուհին կանչեց Սամբոյին և ասաց:

— Սամբո, ահա այս բանը, տար տուր միտոր Ջեկսոնին:

Յե՛վ Սամբոյին տվեց մի կողով ու մի փոքրիկ թուղթ:

Ճանապարհին Սամբոն չհամբերեց, բացեց կողովը, վորից շատ անուշ հոտ եր բերօւմ: Կողովում կար մի քանի տապակած վառիկ:

Վառիկները շատ եյին: Միթե՞ դատավորը այսօր կարող ե ուտել: Ո՛վ պիտի իմանա յեթե վառիկներից մեկը պակասի:

Սամբոն վառիկներից մեկն անուշ արեց և ուրախ տրամադրությամբ, յերգելով մտավ դատարանի շէնքը:

Դատավորը նայեց թղթին, դիտեց կողովը, մի անգամ ել նայեց թղթին և հարցրեց:

— Իսկ ո՛ւր ե մեկ վառեկը. այստեղ միայն յերեքն ե:

Սամբոն մնաց միանգամայն զարմացած ու շփարած: Չյին՞ թե այս անիծած թուղթն ե իրեն մատնողը: Մի՞թե թուղթը կարող ե խոսել:

Այդ մի վառիկը Սամբոյի կողերին շատ թանկ նստեց: Յե՛վ յերբ հաջորդ անգամ Սամբոյին ճաշ տվին, վոր տանի իր տիրոջը, վորոշեց մտածված ու խելոք գործ բռնել:

Նախ քան ուտելը, նա թուղթը թաղցրեց մի քարի տակ, վորպեսպի վոչինչ չտեսնի: Ուտելուց հետո, Սամբոն թուղթը հանեց քարի տակից և լավ տրամադրությամբ շարունակեց իր ճանապարհը:

Բայց այդ անիծված թղթի մեջ նստել եր ինքը, սատանան, վոր քարի տակից ել տեսել եր և ամեն բան «պատմել» դատավորին:

Մարդիկ այնքան ել շուտ և հեշտ կերպով չեն հասել խոսող թղթին: Մինչ այդ նրանց համար ավելի պարզն ու հասկանալին խոսող իրերն են յեղել: Ծխամորճը խոսում եր նրանց հետ խաղաղության մասին, նիզակը՝ պատերազմի, լարված աղեղը՝ հարձակման և այլն:

Անցան հազարավոր տարիներ, մինչև վոր մարդիկ խոսող առարկաներից՝ հասան խոսող թղթին:



ՆԿԱՐ-ԳՐՈՒԹՅՈՒՆ

Դժվար չե նամակ գրել, յեթե ունես թուղթ ու մատիտ: Բայց յերբ վոչ այդ կա, վոչ ալիս, և յերբ այբուբենին փոխարինում են նիգակը, նետը, ծխամորճը և նման հազարավոր առարկաներ, գործն այնքան ել հեշտ չէ: Ասենք ուզում ես մեկին հաղորդել, թե վոսի ժամանակ վագրը յերեք մարդ ե հոշոտել: Ի՞նչպես անես:

Ձեռքի տակ չունես վոչ մի վագր, վոչ ել մանավանդ, մարդու դիակ: Ունենաս ել ի՞նչպես ուղարկես այդպիսի արտասովոր նամակ:

Բայց յեթե կենդանի վագր ուղարկելը հնարավոր չէ, կարելի չե ուղարկել վագրի նկարը, վոր այնքան ել դժվար չէ:

Հենց այդ հանգամանքն ել մարդկանց հարկադրել ե նամակ-իրերից անցնել նամակ-նկարի:

Իսկ մարդիկ նկարել գիտեյին շատ հին ժամանակներից: Դեռ այն ժամանակ, յերբ ներկայիս Փարիզի կամ Լոնդոնի տեղը թափառելիս են յեղել բրդոտ մամոնտներ և հյուսիսային յեղջերուներ, յերբ մարդիկ դեռ ապրում եյին քարան-

ձաղներում, նրանք քանդակում, նկարում եյին իրենց իսկ ձեռքով սպանած գազանների վոսկորների վրա գանազան նկարներ: Այդպիսի նկարներ հաճախ են պատահում քարանձաղներում — նախնական մարդկանց բնակարաններում:

Հին դարերից այդպիսի պատկերներ մեզ շատ են հասել: Այդ պատկերները կամ քանդակված են վոսկորների վրա, կամ փայտի կեղևի, կամ նրկարված են յեղջերվի կաշվի վրա:

Հետագայում արդեն փոխանակ ծխամորճ, նիգակ, կամ աղեղ ուղարկելու, ուղարկում եյին զրանց նկարները:

Այդպիսով կարելի չեր պատկերել շատ բան, քայց վոչ ամեն ինչ — ինչպես կարելի չե նկարել, որինակ, քամին, կյանքը, քաջությունը, բախտը և այլն:

Յեթե դիտելու լինենք հին դարերի գրերը, կտեսնենք, վոր մարդիկ շատ ճարպիկ կերպով այդ գրությունից գուրս են յեկել:

Քամին նրանք պատկերել են փքված առագաստի տեսքով, կյանքը ոձի կերպարանքով, վորովհետե հավատում եյին, վոր ոձն անմահ ե, քաջությունը՝ առյուծի կամ արծվի կերպարանքով և այլն: Յեթե հնդիկն ուզում եր ասել՝ «մարդը բաղդավոր ե» մարդու նկարի մոտ նկարում եր կրիա: — Հնդիկը հավատում եր, վոր կրիան իր հետ հաջողություն, յերջանկություն ե բերում: Մեզ մոտ, նման դեպքում, մոտիապաշտները կրնկարելին պայտ:

Ահա այդպիսի նկար — գրության մի նմուշ,

վոր գտնված է Ամերիկայի Վերին կոչված լճի մոտ՝ ապառաժներում:

Կարգանք այս գրութիւնը:



Հինգ մակույկները, վորոնց մեջ կան 51 մարդ պատկերացնում են հնդիկների նավարկութիւնը լճի վրա: Ձի հեծած մարդը, հավանորեն, առաջնորդն է: Արշավանքը պետք է տեւած լինի 3 օր, վորովհետեւ նկարում նկարված է յերեք արեգակ, յերեք յերկնակամար: Կրիան և արծիւն այն են ասում, վոր արշավանքը հնդիկների քաջության շնորհիւ շատ հաջող է անցել: Տարրերնակ կենդանին, վորին վոմանք համարում եյին հովազ, դա առաջնորդի անունն է — առաջնորդին անվանելիս են յեղել — հովազ: Իսկ ոճի նկարը —

նշանակում է, վոր արշավանքի ընթացքում վոչ մի զոհ չեն տվել — բոլորն ել մնացել են կենդանի:

Անգլիայի մի հին գրող ունի մի հետաքրքիր պատմվածք, վորի մեջ նամակ-գրութիւնը չափազանց կարևոր դեր է խաղացել:

Այստեղ բերում ենք այդ պատմվածքը համառոտ կերպով:

— Դեպքը տեղի յե ունեցել, — սկսեց նավապետը, — 1837 թվին: Յես դեռ բոլորովին յերիտասարդ եյի: Նավարկում եյի Միսսիսիպի գետի վրա «Ջորջ Վաշինգտոն» նավով: Հետագայում այդ նավը խորտակվեց շոգեկաթսայի պայթումից:

Մի անգամ, Նոր-Որլեանում, մեր շոգենավը թափվեց մի ամբողջ ջուկատ: Դա մի արշավախումբ էր, վոր գնում էր շրջանի ճահիճներն ու անտառները հետազոտելու:

Բոլորն ել յերիտասարդ և ուրախ մարդիկ եյին, բացառութեամբ արշավախմբի պետի, վոր մի շատ լուրջ և հասակն առած մարդ էր: Պետը կատակել չեր սիրում. նա զրեթե միշտ լուռ էր շարունակ ինչ վոր հաշիվներ եր անում և գրում իր ծոցատետրում: Յերևում էր, նա զիտնական մարդ է: Իսկ արշավախմբի մյուս անդամները, մանավանդ զինվորները, վոր պետք է խումբը պաշտպանեյին հնարավոր վտանգներից ու արկածներից, աղմկում եյին, կատակում, ուտում, խմում: Մենք ել այդ աղմկոտ կյանքին ընտելացել եյինք:

Տերը ջոկատն ամի իջավ, շոգենաւում աշնա-
պիսի մի լուսթյուն տիրեց, կարծես թե այնտեղ
այլեւս վոչ մի մարդ չկա:

Սկզբում նրանց հաճախ եյինք հիշում, բայց
հետո մոռացոյ իյան տվինք:

Անցել եր յերեք թե շորս ամիս: Յես վոխա-
ղըրվել եյի «Մեղուզա», շոգենաւում:

Մի անգամ մոտենում ե ինձ սպիտակահեր
մի ծերուկ ճամբորդ ու հարցնում.

— Զոն կիպսը դո՞ւք եք:

— Յես ինքս եմ, — պատասխանում եմ:

— Լսել եմ, վոր դուք առաջ «Զորջ Վաշինգ-
տոն» նաւումն եյինք:

— Այո, — ասում եմ: — Բայց ինչո՞ւ յեք հե-
տաբերբրվում:

— Ահա թե ինչու, — ասաց նա: — Այդ շոգե-
նաւով հետախուզության ե գնացել մի խումբ, վո-
րոնց մեջ եր նաև իմ վորդին, Տոմը: Այդ ջոկատն
անհետ կորել ե. փնտրողներ յեղել են, բայց չեն
գտել. այժմ յես ինքս եմ գնում նրանց վորոնելու:

Նայում եմ ծերունուն և խղճում: Ինչպես կա-
րող ե նա զիմանալ ջերմաստին, վորն այնքան
տարածված ե այդ ճանաչին վայրերում: Բացի
այդ, հնդիկները թշնամաբար են վերաբերվում
դեպի սպիտակները և տեղն ընկած դեպքում սպա-
նում են նրանց:

— Յե՛վ դուք մենակ եք ուզում այդ քայլն
անել, — հարցնում եմ յես.

— Վոչ, — ասում ե նա, — ինձ անպատճառ
ընկեր ե պետք: Դուք չեյիք կարող մատնանշել

մեկին, վոր համաձայնվեր ինձ հետ գնալ: Յես
փող չեմ խնայի, նույնիսկ ագարակս կծախեմ,
յեթե պետք լինի:

Մտածում եմ և ասում.

— Յեթե յես կարող եմ ոգտակար լինել ձեզ,
պատրաստ եմ ինքս ընկերանալու:

Յերկրորդ որը մենք ամի իջանք, ճանապարհի
պաշար պատրաստեցինք, գնեցինք ատրճանակներ,
հրացան, վրան, վարձեցինք շրջանին լավ ծանոթ
մի հնդիկ ուղեկից և ճանապարհ ընկանք:

Քանի մղոն եյինք անցել՝ դժվարանում եմ
ասել Յես, վոր բավականին ուժեղ և առողջ կազմ-
վածքի տեր մարդ եյի, միանգամայն ուժաս-
պառվել եյի: Սկսեցի համոզել ծերուկին, վոր վե-
րադառնանք: Ասում եմ՝ ինչպես յերևում ե, ճա-
նապարհից շեղվել ենք: Յեթե այս կողմերով մար-
դիկ են անցել, պետք ե վորևե հետք թողած լի-
նեն: Քանի որ ե՛ գնում ենք, սակայն վոչ մի հետք:

Նույնն եր ասում նաև մեր ուղեկիցը:

Քիչ քնաց ծերունուն համոզելինք, սակայն
մի հասարակ պնձե կոճակ խանդարեց: Յե՛վ այդ
կոճակն ել պատճառ դարձավ ծերունու մահվան:

Կանգ եյինք առել հանգստանալու: Հնդիկ
առաջնորդի հետ միասին խարույկ վառեցինք,
վրան խփեցինք և հենց ուզում եյինք նստել, յերբ
մեր ծերուկն աղաղակեց.

— Զոն, նայի՛ր — կոճակ:

Նայում եմ՝ իրոք վոր կոճակ ե, այն կոճակ-
ներից, վոր ունենում եյին զինվորներն իրենց
վերարկուների վրա:

Ծերուկը բոլորովին գգվեց: Նայում ե կոճակին և լաց լինում:

— Այս կոճակին իմ Տոմինն ե, իսկ և իսկ նրանք. այժմ նրան կգտնենք:

Ասում եմ՝ փորտեղից իմացար, թե կոճակը անպատճառ Տոմինն ե. չէ՞ փոր զինվորները յոթը հոգի յեն յեղել:

— Վոչ,— ասում ե ծերունին,— դու ինձ հետ մի վիճիր: Այս կոճակը տեսնելուն պես իսկույն իմացա:

Շարունակում ենք մեր ճանապարհը: Այժմ ծերունին վերադառնալու մասին լսել անգամ չի ուզում: Ասենք՝ յես ել ել դադարեցի վերադարձի մասին խոսելուց: Ինչ ել լինի, կոճակը համենայն դեպս հետք ե:

Հաջորդ որը մեր ծերուկը բռնվեց ջերմատուփ: Մոսկալի տաքություն ուներ, բայց չեր ուզում պառկել:

— Պետք ե շտապել, Տոմն սպասում ե:


Վերջապես մեր ծերուկը այլևս չկարողացավ դիմանալ. միանգամայն ուշադնաց վիճակում ընկավ գետին:

Յերկու որ խնամեցի նրան, բայց փոչ մի կերպ չկարողացա ոգնել: Նա մեռավ կոճակը ափում պինդ սեղմած:

Թաղեցինք նրան և վերադարձանք, միայն թե ուրիշ ճանապարհով: Յեվ ահա բաղդի հեգնանքով, մեզ իսկական հետքեր պատահեցին: Սկզբում խարույկի հետքեր գտանք, ապա՝ շներ և հետո արդեն — ամենահետաքրքրականը — ծառի

կեղև: Այդ ծառի կեղևը քանի տարի յե պահում եմ:

Նավապետը պահարանից հանեց ծառի կեղևը, փորի վրա նկարված եր ահա այս նկարը:



Այս նկարը նկարել ե ջոկատին ուղեկցող հնդիկներից մեկը: Ըստ յերևույթին ջոկատը մոլորվել և յերկար ժամանակ թափառելիս ե յեղել անտառում: Յեվ փորպեսզի իրենց մասին մի տեղեկություն հայտնած լինեն, հնդիկ ուղեկիցներն, իրենց ցեղական սովորույթի համաձայն, թողնում են տեղեկագիր՝ «գրված» կեղևի վրա: «Նամակը» փակցված եր աչքի ընկնող մի տեղում, ծառի վրա:

Մեր հնդիկ առաջնորդը նկարի բովանդակությունը բացատրեց այսպես,— Թոչունը, փոր թևատարած թոչում ե, դա ճամբորդություն ե. ութ մարդը և նրանց շարքին ութը հրացանը — զրանք զինվորներ են, փորոնց մեջ ե իհարկե և խեղճ Տոմը: Վեց փոքրիկ նկարները — արշավախմբի մասնակցորդներն են:

Դրանցից մեկը, փոր ձեռքին գիրք ունի — արշա-

վախմբի պետն ե: Յերկուսը, վորոնցից մեկը
 ձեռքին ծխամորճ ե, իսկ մյուսի ձեռքին նիզակ —
 հնդիկ առաջնորդներն են, խարույկները ցույց
 են տալիս նրանց իջևանած տեղերը: Կուղբը
 մեջքի վրա, վտաքերը դեպի վեր նկարած — դա
 նշանակում ե, վոր հնդիկներից մեկը՝ Կուղբ
 անունով, մեռել ե ճանապարհին:

Այդ նկար - գրության բովանդակությունն
 խմանալուն պես յես վորոշեցի շարունակել մեր վո-
 րոնումը: Շարունակում ենք ճանապարհներս և
 մի շաբաթից հետո կորցրած ջոկատի ճանապարհը
 գտնում:

Շատ տարիներ են անցել այն որվանից, բայց
 ամեն անգամ, յերբ տեսնում եմ այս կեղևը,
 միշտ ել հիշում եմ ծերունուն և կոճակը:



ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳՐԵՐ

Յերկար տարիներ զիտնականները գլուխ եյին
 ջարդում հասկանալու համար այդ խորհրդավոր
 գծագրությունները, վորոնցով զարդարված են
 յեզիպտական տաճարների և բուրգերի պատերը:

Այդ նկարներից մի քանիսը դժվար չեր հաս-
 կանալ: Բայց զրանց մեջ կային զանազան նշան-
 ներ՝ գրված սրանից մի քանի հազար տարի
 առաջ, վոր միանգամայն անհասկանալի եյին:
 Այդ նշանագրերի տակ թագնված եյին յեզիպ-
 տական ժողովրդի պատմությունը, նրանց կեն-
 ցաղն ու սովորութիւնները: Գիտնականները յեր-
 կար ժամանակ աշխատում եյին լուծել այդ նշա-
 նագրերի գաղտնիքը, բայց չեր հաջողվում: Յե-
 գիպտացիներին հաջորդող սերունդը — Կուպ-
 տերը — վոչ մի բանով չկարողացան ոգնել այդ
 բանում, քանի վոր դրանք վաղուց մոռացել եյին
 իրենց նախահայրերի նշանագրերը:

Վերջ ի վերջո այդ նշանագրերի գաղտնիքը
 բացվեց: 1799 թ. ֆրանսիական զորքը, Նապո-
 լեոն Բոնապարտի առաջնորդությամբ, ավել իջ-

նում յեգիպտական ջրերում: Ռոզետտա քաղաքի մոտ, խրամատների փորելու ժամանակ, գետնի տակ յերևան ե հանվում մի հսկա քարե սալ,



Վորի վրա յերկու լեզվով — հունարեն և յեգիպտերեն — գրություն ե լինում:

այ Վորքան եյին ուրախացել գիտնականներն այդ գյուտով... Չէ՞ վոր այժմ նրանց ձեռքին եր նշանագրերի բանալին: Թվում եր, թե բավական ե միայն համեմատել հունական և յեգիպտական գրերը՝ և ահա գաքտնիքը կպարզվի: Բայց նրանք հիասթափվեցին:

Գիտնականները կարծում եյին, թե դա նկարգիր ե, ուր յուրաքանչյուր մի բառը նշանակված կլինի առանձին նկարով: Բայց յերբ նրանք փորձեցին այդ համեմատել հունական բառերին ու գրերին — վոչինչ դուրս չեկավ:

Մենք մինչև որս ել չեյինք կարողանա կարդալ նշանագրերը, յեթե 23 տարի հետո Փրանսիացի գիտնական Շամպոլիոնն ուշադրություն չդարձներ այն բանի վրա, վոր մի քանի յեգիպտական նշաններ շրջանակված են: Նույն այդ տեղում, շրջանակում հունարեն գրված ե Պտոլմենս Փարավոնի անունը: Շամպոլիոնի գլխում միտք ծագեց, վոր շրջանակում գետեղվածը բառ ե, և նշանակում ե Պտոլմենս: Յեվ յեթե այդպես ե, կնշանակի նշանները՝ տառեր են:



■	◐	⊙	☐	⌒			⌒
Պ	Տ	Ո	Լ	Մ	Ե	Ե	Ս

Բայց դա միայն յենթադրություն եր: Գուցե այդ նշաններն ուրիշ նշանակություն ունեյին — անհրաժեշտ եր ստուգել:

Դիպվածն ողնեց Շամպուլիոնին, Ֆելե կղզում
 նույնպես գտնվեցին յերկու լեզվով քանդակված
 գրություններ: Այստեղ ել գրերը շրջանակի մեջ
 էին: Այդ գրերը Շամպուլիոնին հայտնի գրեր
 էին արդեն:



Յեվ յերբ նա գրերն իրար տակ դասավորեց,
 «տացվեց»



Դիտելով հունական բնագրերը՝ Շամպուլիոնը
 նույն տեղում գտավ

Կ Լ Ե Ո Պ Ա Տ Բ Ա

անունը:

Կնչանակի յենթադրությունը ճիշտ եր—
 ձվածն շրջանակում գրերը փոշ թե բառեր էին,
 այլ առանձին տառեր: Այժմ Շամպուլիոնն ուներ
 տասնևմեկ տառ. — ա, s, ո, լ, մ, Ե, ա, կ, ա, s, Ե:

Բայց յերբ Շամպուլիոնը փորձում եր այդ
 տառերով կարդալ չշրջանակված բառերը, փոշինչ
 չեր ստացվում: Անցան շատ տարիներ, մինչև իսկ
 այդ անհաջողության պատճառը պարզվեց: Բանն
 այն ե, Վոր յեզրիպատացիները միմիայն անուն-

ներն էին՝ գրում տառերով, իսկ մյուս բառերը
 գրում էին զանազան ձևերով: Յեզրիպատական
 գրությունը հիշեցնում ե մեր ուրուսները: Որի-
 նակ՝ մի տեղ գծադրությունները նշանակում են
 ամբողջ բառեր, մի այլ տեղ՝ առանձին վանկեր
 կամ նույնիսկ տառեր: Ահա, որինակ՝ ուրուս,
 կազմված յեզրիպատական ձևով:



ն



վարդ



ի



տա



պիկ



բ



ասեղ



ուռ

9

ի

Ինչպես տեսնում եք, այստեղ նկարներից մի
 քանիսն ունեն տառերի նշանակություն (ն—
 նկար. Ի—իլիկ, Ը—բնկույզ), մի քանիսը՝ վան-
 կերի (ՏՍ.—տակառ, ՈՒՆ—ուռնկ) մի քանիսն ել՝
 ամբողջական բառերի (վարդ, սիկ, տսիդ):

Մի ժամանակ յեզրիպատացիները, ինչպես և
 հնդիկները, գրելու փոխարեն նկարում էին:
 Բայց դա շատ առաջ եր: Փոքր առ փոքր նկար-
 ներն սկսեցին ցույց տալ վանկեր, իսկ հետո՝
 հնչյուններ:

Ահա մի քանի յեզրիպատական նշանագրեր:



Շատ հետաքրքիր է, թե ինչպես կարգացվեցին հին պարսկական գրությունները:

Պարսիկները, ինչպես և նրանց հարևան բաբելացիները, գրում էին, կամ ավելի ճիշտ՝ փայ-



տիկներով գծում էին կավից շինած թաց տախտակների վրա. այդ գրերը ունեին սեպերի: Հենց այդտեղից էլ այդ գրերը կոչվում են սեպագրեր:

Գիտնականները յերկար աարինք աշխատանք գործ գրին այդ գրերը հասկանալու համար, նրանք հույսերը կտրել էին այդ տարրերնակ և միտրինակ գրերի միտքը հասկանալու, յերբ գրա գաղանիրը գտավ գերմանացի գիտնական Գրոտեֆենդը: Այդ գրերի բանալին գտնելն ավելի դժվար էր այն պատճառով, վոր միայն մի լեզվով էր գրված, հակառակ յեզիպտական նշանագրերի: Գրոտեֆենդը դիտելով պարսկական թագավորների հուշարձանները, նկատեց, վոր մի քանի բառեր հաճախ են կրկնվում բոլոր արձանները վրա: Նա յենթադրեց, վոր այդ բառերը նշանակում են «թագավոր պարսից» կամ նման մի բան: Յեթե այդ այդպես է, կնշանակե, «թագավոր» բառից առաջ գրված բառը անուն է, որինակ՝ «Դարեհ թագավոր պարսից»:

Գրոտեֆենդը սկսեց մտաբերել պարսից թագավորների անունները — Կյուրոս, Դարեհ, Բսերքսես, Արտաքսերքս և փորձեց սեպագրերը համարեցնել այդ անուններին:

Դ Ե Յ Կ Ի Վ ՈՒ Շ

Դարեհ կամ հին պարսկական «Դաուրիուշ» անունը տառերի քանակի կողմից համարվեց այդ անվան:

Գրոտեֆենդը արդեն իր զբաղմունքի մասնակցներ յոթ տառ:

Մի այլ տեղ նկատեց ծանոթ տառեր:

« Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ »
 Ծ Ի Ա Բ Ծ Ա

Չկար միայն առաջին տառը: Դժվար չէր յենթադրել, վոր պակասը կ տառն է, վոր լրացնելով՝ կստացվի Կեիարեա այսինքն՝ Քսեբեսա:

Բանալին գտնված էր: Բնորոշն այն է, վոր Գրոտեֆենդի ինչպես և Շամպոլլիոնի հայտնաբերումներին ողնության են գալիս միմիայն թագավորների անունները:

Վերջի վորջո Գրոտեֆենդին հաջողվեց ուրիշ տառեր ևս գտնել: Պարզվեց ինչպես նա յենթադրում էր, վոր թագավորների անուններին հաջորդող տառերը թագավորների տիտղոսներն են, ինչպես որինակ՝ Դարեհ, մեծ քաղավոր, արքայից արքա, իսխան պարսից, քաղավոր ժողովրդների յեվ այլն:

Պետք է նկատել, վոր սեպագրերը պարսիկները չեն հնարել, այլ վերցրել են բաբելացիներից: Սկզբներում բաբելացիները, ինչպես և բոլոր հին ժողովուրդները՝ չէին գրում, այլ միայն նկարում էին: Բայց վորովհետև բաբելացիներն իրենց այդ նկարներն անհարմար նյութի՝ կավի վրա էյին նկարում, ստացվում էյին անկյունավոր, քառակուսի նկարներ: Որինակ՝ շրջանակի փոխարեն ստացվում էր քառակուսի ինչպես՝ արեգակ, աստղ, ձուկ, տուն, ձեռք. ժամանակի



արե



աստղ



զուկ



տուն




ջեռք

ընթացքում, նկարներն սկսեցին նշանակել բառի առաջին վանկը:

Պարսիկներն ավելի պարզացրին սեպագրերը և վերածեցին հնչյունատառերի:

Այդ գրերը հազարավոր տարիներ մնում էյին վորպես խորհրդավոր մի գաղտնիք: Վորքան նոր ու հետաքրքիր տեղեկություններ իմացան մարզիկ անցյալից, յերբ Շամպոլլիոնն ու Գրոտեֆենդը գտան նշանագրերի ու սեպագրերի լեզուն:



Բայց դեռ բոլոր գաղտնիքները պարզված չեն։ Մինչև այժմ դեռ չեն կարդացվել Սիրիայում և Փոքր Ասիայում գտնված բարե առյուծների և սֆինքսների վրա քանդակված գրերը։ Արդի Սիրիայում և Փոքր Ասիայում մի ժամանակ տարելիս են յեղեղ հեթիթները։ Այդ ժողովրդի մասին տեղեկություններ շատ քիչ կան՝ այն ելմանցած յեգիպտական աղբյուրներից։ Այդ մոռացված ժողովրդի անցյալը կարգվի այն ժամանակ միայն, յերբ կգտնվի հեթիթական գրերի բանալին։

Բայց կարգալ գրերը — բավական չե։ Յեթե Շամպոլլիոնը չիմանար կոպտերի լեզուն (կոպտերը հին յեգիպտացիների սերունդն են), հազիվ թե կարողանար հասկանալ յեգիպտական գրերի իմաստը։

Ավելի վատ վիճակի մեջ է գտնվում հին Խաալիայի բնիկների — ետրուսկների գրերի գործը։ Սրանց տառերը շատ քիչ են տարբերվում հունական տառերից, այնպես վոր դրանց կարգալը վոչ մի դժվարություն չի ներկայացնում։ Բայց բանն այն է, վոր ետրուսկների լեզուն վոչ վորք չգիտե, այդ պատճառով ել դրանց գրերի բովանդակությունն ու միտքը դեռ անհայտ են։

Վորքան ցավալի յե, — ունենալ ձեռքի առակ հին գրեր, այդ գրերը կարգալ և վոչինչ չհասկանալ...

Դեռ վորքան հետաքրքիր և չպարզված հարցեր կան աշխարհում, վոր սպասում են իրանց լուծմանը։

ԺԼՈՒԽ VI.

ՏԱՌԵՐԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Նկարագիրն աստիճանաբար փոխվում է տառի։ Բայց դեռ տեղեր կան, ուր մինչև այժմ ել գործ են ածում հիերոգլիֆները։

Ասենք մեզ մոտ ել հիերոգլիֆները դեռ բոլորովին գործածությունից դուրս չեն յեկել։ — Ձեռքը, վոր մատով ցույց է տալիս ուղղությունը, կամ սլաքը, ելեկտրական սյունի վրա կարմիր գույնով նկարած կայծակը, գանգը և վոսկորները՝ սրվակների վրա, վոր զգուշացնում են թույնից և այլն, — դրանք բոլորը հիերոգլիֆներ են, և նշանակում են խոսքեր ու ամբողջ նախադասություններ։ —

Գնա՛ այն կողմով.

Զգուշացիւ ելեկտրական հոսանքից.

Սա — թույն է.

Մի քանի դեպքերում հիերոգլիֆները տառերից ավելի հարմար են։

Ձինական լեզուն շատ տարորկնակ է, աղբաւ և գրեթե միորինակ։ Նրանց ամեն մի բառը մի քանի իմաստ ունի։

Բայց ինչպես այդ գրել: Չինացիներն այդ դժվարին դրուժյունից այսպես են դուրս յեկել: Վերցնենք որինակ՝ «չուռ» բառը: Չինարեն զա նշանակում է և նավ, և շատախոսություն, և հրդեհ և կոնք, և աղվամագ. Ինչպես են գրավոր արտահայտում այդ իմաստների տարբերությունը: Յեթե նկարում են առաջատուր կայմի վրա, այդ նշանակում է՝ նավ: Շատախոսություն գրելու համար նկարի կողքին գծազրույց են՝ բերան: «Հըր-դեն» գրելու համար առաջատուր կողքին գծազրույց մի նշան՝ վոր հրդեհ և նշանակում: Առաջատու + ջուր՝ նշանակում է կոնք: Առաջատու + փետուր՝ նշանակում է աղվամագ:

Հեշտ է հավատալ, վոր մեր գործածած տառերը այս կամ այն իրի պատկերից են առաջացել: Մինչև ներկա մեր տառերը այդ նկարները յերկար, շատ յերկար ճանապարհորդություն են կատարել — տեղից տեղ, յերկրից — յերկիր են անցել, մինչև վոր հասել են մեզ:

Իրանց հայրենիքը Յեգիպտոսն է: Յեգիպտացիները շատ հին ժամանակներից գիտեցին իրենց մտքերն արտահայտել նկարներով: Բայց ժամանակի ընթացքում նրանք նկատեցին, վոր նկարներով հնարավոր չէ ամեն ինչ արտահայտել: Ինչպես, որինակ՝ նկարել անու-

նը: Լավ է, յեթե անունը նման է այս կամ այն իրին, իսկ յեթե վնչ...

Հենց այդ ել պատճառ հանգիստացավ, վոր յեգիպտացիներն իրենց հարյուրավոր նշանազրույցին ավելացրին 25 իսկական տառեր:

Այդ բանը նրանք արեցին շատ հասարակ կերպով: Նըրանց խոսակցության մեջ կային շատ կարճ բառեր, որինակ՝ «Ռո» — բերան, «Պուր» — խտիր, «Բու» — տեղ: Բերանի նկարը փոխվեց «ռ» տառի, խտիրինը — «պ»-ի և այլն:

Յեվ այդպիսով մի շարք հիերոգլիֆներ փոխվեցին տառերի:

Բայց յեգիպտացիներն այդ նոր ձևի գրության հետ միաժամանակ գործ եյին անում և հին ձևը՝ հիերոգլիֆները: Շատ հաճախ նրանք մի բառ գրում եյին տառով և կողքին միաժամանակ ըստ հին ձևի՝ նկարում: Նկատելի յե, վոր տառերին միանգամայն չկարողացան ընտելանալ: Որինակ՝ գրում եյին տառերով «տն» — գիրը և կողքին նկարում գիրը,

☉ արև 日

☾ լուսին 月

⚡ ար 山

☼ ջուր 水

火 կրակ 火

木 ծառ 木

犬 շուն 犬

馬 ձի 馬

子 լերեխա 子

目 աչք 目

կամ գրում էին «ան» — ձուկ և միաժամանակ նկարում ձուկ:

Այդ անում էին վոչ թե նրա համար միայն, վոր դեռ չէին ընտելացել զրան, այլ կար ուրիշ պատճառ: Յեզիպտական լեզվում, ինչպես և չինարենում, շատ բառեր գրվում են միատեսակ և, վորպեսզի շփոթութուն չառաջանա, գրեթե յուրաքանչյուր բառին հարկավոր է բանալի — բացատրական նշան: Զուկը կամ գիրքը, հենց այդ բացատրական նշանները կամ բանալիներն են:

Առանց այդ բացատրական նշանների կարող եր մեծ շփոթութուն առաջ գալ և ահա թե ինչու: Յեզիպտացիները դեռ չունեին ձայնավոր տառեր և, որինակ՝ փոխանակ գրելու «խպեր» (բզեզ) — գրում էին «խպր»: Յեվ յեթե մենք ել գրելու լինեինք միայն բաղաձայն տառերով, մենք ել պետք կգզայինք բացատրական նշաններ: Որինակ՝ «սր» բառը առանց բացատրական նշանների կարելի կլինի կարդալ մի քանի տեսակ. — սար, սուր, սեր:

Հենց այդ պատճառով ել յեզիպտացիները կարիք ունեին բացատրական նշանների:

Թվում է, թե ով հնարել է տառերը հնարած պիտի լինի և այբուբենը: Բայց այդպես չի յեղել: Այբուբենը հնարել են յեզիպտացիների վոխերիմ թշնամիները՝ սեմացիները:

Մոտ 4000 տարի սրանից առաջ Յեզիպտոսը նվաճված եր սեմական ծագում ունեցող Գիսերի կողմից: Ամբողջ հարյուր տարի Յեզիպտոսը

յենթակա յեր Գիկսերի տիրապետության: Գիկսերն այդ ժամանակամիջոցում սովորելով յեզիպտական գրերը՝ մի կարևոր գյուտ արին — նրանք գտան, վոր կարելի յե ամեն բառ տառերով գրել: Յեվ ապա հնարում են այբուբենը — առաջին այբուբենը աշխարհում: Նրանք ընտրում են յեզիպտական բաղաձայնիկ նկար-նշանագրերից միայն յերկու տասնյակ և դարձնում տառեր:

Մեզինց ով այբուբենարան չի տեսել: Մենք բոլորս ել կարդալը սովորել ենք այդ պատկերազարդ գրքով, վորտեղ Ա. տառի մոտ նկարված է արեգակ, Բ տառի մոտ բահ, Գ տառի մոտ գալլ կամ մի այլ նկար, վոր սկսվում է Գ տառով և այլն:

Յեվ Գիկսերն այդպես ել անում են: Ա. գրելու փոխարեն նրանք նկարում են գոմեշի գլուխ, վորովհետև նրանց լեզվով գոմեշին ասում են՝ «ալեֆ» Բ-ի փոխարեն տուն, վոր նրանց լեզվով կոչվում է «Բետ», Ռ-ի փոխարեն՝ մարդու գլուխ, վոր սրանց լեզվով ասում է «Ռեշ» և այլն:

Այդպիսով նրանք ստանում են 21 տառից կազմված այբուբեն:

Առաջին այբուբենը ծնունդ է առնում և գործածության մեջ մտնում Գիկսերի թագավորների գիվանատներում:

Անցնում է հարյուր տարի: Յեզիպտացիներն ազատվում եր «ոտար իշխողներից». — այդպես էին անվանում Գիկսերին յեզիպտացիները: Գիկսերի թագավորութունը միանգամայն վերա-

նում ե յերկրի յերեսից, բայց նրանց այբուբենն անցնում ե փուռնիկեցիներին: Փյունիկեցիները, վոր բնակվելիս են յեղել Յեգիպտոսից դեպի արևելք տանող Միջերկրական ծովի ափերում իրենց ցեղակիցներին՝ Գիկսերին՝ թողած այդ ժառանգությունը պահում են և ապա վորպես ճամբորդող վաճառական ժողովուրդ՝ յերկրից-յերկիր անցնելով տարածում են այդ այբուբենը: Փյունիկեցիների առևտրական նավերը գլխավորապես խարիսխ եյին գցում Հունական ափերում և կիպրոս կղզում: Այդտեղի ժողովուրդները, վորոնց հետ փյունիկեցիներն առևտուր եյին անում, յուրացնում են նաև նրանց այբուբենը:

Սակայն այդ այբուբենն այն չեր, ինչմենք տեսանք Յեգիպտոսում: Փյունիկեցիները, վորպես առևտրական, գործնական ժողովուրդ, ժամանակ չեյին կորցնում տառերը նկարելու: Գոմեշները, ոձերը, գլուխները, աները փոխվել եյին գրերի և ավելի պարզ ձև ստացել նրանց ձեռքի տակ:

Այդ տառերը Հունաստան մտնելուց հետո անցնում են Իտալիա և ապա ճամբորդում դեպի Հյուսիս՝ Այբուբենը, նախ քան դեպի հյուսիս ճամբորդելը, ամբողջ յերկու հազար տարի հանգիստ ե առնում Հունաստանում և այդ ժամանակամիջոցում ել ավելի փոխվում, ել ավելի պարզ ձևեր ստանում:

Վորպեսզի պարզ լինի նրանց նախնական վիճակը, հարկավոր ե համեմատության դնել նախնական և հետագա մի քանի նշանագրեր:

Այս նկար-գրերում գուր կտեսներ, վոր բնոր տառերն իրենց նախնական վիճակում հակառակ կողմն են նայում: Այդ առաջ ե յեկել նրանից, վոր փյունիկեցիները գրում եյին վոչ թե ձախից աջ, ինչպես մենք ենք գրում, այլ աջից դեպի ձախ: Հույները, վեցնելով այբուբենը փյունիկեցիներից, սկզբում նույնպես գրում եյին աջից ձախ, իսկ հետո սկսեցին գրել և այսպես, և այնպես — մի տողը գրում եյին աջից ձախ, իսկ մյուսը ձախից աջ: Հետագայում այդ ձևն անհարմար գտնելով՝ սկսեցին գրել միմիայն ձախից դեպի աջ: Գրելու այդ ձևը հույներից ել ժառանգություն ե անցել մեզ:

Փոխելով տողերի ընթացքը, հույները, տառերն ել շրջեցին դեպի հակառակ կողմը:

Մինչև այժմ ել դեռ կան աղգեր, վորոնք գրում են աջից-ձախ, ինչպես որինակ՝ հրեաները, պարսիկները և մահմեդական շատ ցեղեր: Իսկ Չինացիները դեռ այժմ ել գրում են վերից վար, ինչպես մի ժամանակ գրելիս են յեղել յեգիպտացիները:

Տառերն ուրիշ ճանապարհորդություններ ել են կատարել: Հունաստանից դրանք նախ մտել են Իտալիա, ուր ժամանակի ընթացքում ձևափոխվել, վերածվել են լատինական այբուբենին՝ Մի այլ ճանապարհով Յեգիպտոսից նշանագրերն անցել են Հնդկաստան, Սիամ, Պարսկաստան, Հայաստան և այլն: Չկա յերկրագնդիս վրա մի այբուբեն, վոր սկիզբ պռած չլինի յեգիպտական նշանագրերից:

ՀԱՅԻ	ՄԴԻԿԻ	ԿԵԿՍ	ՎԱՐԻ	ՔԵՔԴ	ՃԱՅԵ	ՃԱՅԵ	ԿՐԵԿ	ԿԱՐԻ	ՔԵՔԴ
Ա	Ճ	Խ	Խ	Ա	Ճ	Խ	ՃԵՍ		Ե
Բ	Բ	Կ	Գ	Մ	Մ	Կ	Գ	Գ	Ե
Գ	Դ	Ի	Վ	Ա	Յ			Ե	Յ
Դ	Ճ	Կ	Դ	Յ	Ն	Կ	Ա	Ե	Ե
Ե	Ե	Խ		Ե	Յ	Վ	Ե	Յ	Յ
Զ	Յ	Ի	Ի	Մ	Օ	Օ	Ս	Յ	Յ
Է	Ե	Խ		Ե	Յ	Յ		Ե	Յ
Ը	Ե			Ե	Ս	Ս	Ե	Ե	Յ
Թ	Թ	Ե	Ե	Ե	Ը	Յ			Ե
Ժ				Ե	Ը		ԿԵԿԻ		
Ի	Ե	Խ	Ա	Ա	Ս	Ը	Ե	Ե	Յ
Լ	Լ	Լ	Վ	Կ	Վ	Կ	Գ	Գ	Ե
Խ				Ե	Ս	Խ	Ս	Ս	Ս
Ծ	Յ	Ե	Ե	Ե	Ը	Ը	Ե	Ե	Ե
Կ	Կ	Կ	Յ	Ե	Յ	Ե	Ե	Ե	Ե
Յ			Ա	Ե	Ե	Ե	Ա	Ե	Ե
Զ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Յ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Զ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե

Այս բոլորից հետո հիմք կա արդյոք հավա-
տալու այն առասպելին, թե հայկական տառերը
հնարել ե Մեսրոպը՝ աստվածային հղացումով,—
թե ինչ վոր մի աներևույթ ձեռքով Մեսրոպի
աչքի առջև գծագրել ե քարի վրա հայերեն տա-
ռերի ձևը ե այլն:

Կասկած չկա, վոր հայերը չեյին կարող ընդ-
հանուր որենրից բացառություն կազմել:

Մեր թվանշաններն ել վոչ պակաս հետաքրք-
րի պատմություն ունեն քան տառերը: Դրանք
ել իրենց սկիզբն առել են նույն նշանագրերից,
նշան-նկարներից:



Կար ժամանակ, վոր մարդիկ ամեն մի հաշիվ
մատենելով եյին անում:— Յեթե ուզում եյին
ասել «մեկ», ցույց եյին տալիս մեկ մատը,
«յերկու» — յերկուսը՝ մեկ ձեռքը՝ «հինգ», յեր-
կու ձեռքը՝ «տասը»: Յերբ պետք ե լինում մեծ
թիվ ցույն տալ, ձեռքերի շարժումներով եյին
հասկացնում:

Հենց այդ մատների կամ ձեռքերի հաշիվն ել
անցավ թղթի վրա: Յեթե դիտելու լինենք հու-

մեյական թվանշանները, միանգամայն պարզ կը-
լինի դրանց աղբյուրը:

Վոչ միայն հռոմեական, այլև այն թվանշանները, վոր ներկայումս գործ ենք ածում, դարձյալ «մատեններից են ծնված»: Ինչպես գրերը, նույնպես և թվանշանները, ժամանակի ընթացքում, փոքր առ փոքր փոփոխության են յենթարկվել:



Այստեղից արդեն հեռու չի մինչև մեր ներկա թվանշանները:


1 2 3 4 5

Մյուս թվանշաններն արդեն կաղմում եյին առաջին հինգի միացումից:

Բայց ամենահետաքրքիրը գերոյի գյուտն է: Յերբեմն թվում է, թե գերոն մի դատարկ բան է, այն ինչ մարդիկ քիչ աշխատանք չեն թափել դրա գյուտի վրա: Չերոյի գյուտը նույնպիսի մեծ գյուտ է, ինչպես որինակ՝ շոգենավի կամ հեռախոսի գյուտը:

Սկզբում գերոն բոլորովին չկար. հաշիվների համար ոգտվում եյին տախտակի վրա գծված քառակուսիներով և շրջանակներով, վորոնց վրա թվեր եյին գրված: Յեթե, որինակ ուզում եյին գումարել 102 և 23, շրջանակները գցում եյին տախտակի վրա այսպես.

Կնշանակե՛ դերոյի տեղը բաց եր մնում: Այդ տախտակը կոչվում եր «աբակ»: Աբակն առանձնապես ոգտագործվում եր այբբենական տառերով հաշիվներ անելիս, վոր մի ժամանակ ընդունված եր հույներէ, ինչպես և շատ ուրիշ ազգերի մեջ: 1 թվանշանը գրվում է ա, 2-ը բ և այլն: Յեթե նրանք հաշվելին այնպես, ինչպես մենք, առանց աբակի, վոչինչ գուրս չեր գար:



Որինակ ինչպես գումարել կամ բազմապատկել 1 և ա կա՛մ և և ու թվերը: Կնշանակե հույները հաշիվները անում եյին մտքում, իսկ աբակը ծառայում եր միայն վճիռ-լուծումը գրի առնելու համար:

Հետո արդեն աբակի տեղ սկսեցին գործածել սովորական սեղան: Այստեղ քառակուսիներ չկային. դրա համար ել չեղած քառակուսու տեղը սկսեցին դնել դատարկ շրջանակ, որինակ՝ 102.



Յեւ յերբ սկսեցին հաշվել թղթի վրա, դատարկ շրջանակը փոխվեց փոքր շրջագծի, վոր է 0:

Մեր ներկա համրիչն էլ աբակի կատարելագործված տեսակն է: Այստեղ ել գերոն չկա, գերոյի տեղ դատարկ է լինում:

ԳԼՈՒԽ I

ՄՇՏՆՁԵՆԱԿԱՆ ԳՐԲԵՐ

Տառերը յերկու տեսակ ճամբորդություն են կատարել, — մի կողմից՝ յերկրից - յերկիր, ժողովրդից - ժողովուրդ, մյուս կողմից՝ քարից անցել են պապիրուսի վրա, պապիրուսից մոմի, մոմից մագաղաթի և վերջապես մագաղաթից թղթի վրա: Ինչպես վոր ծառն ավազոտ տեղում այլ կերպ է աճում, քան թե ճահճուտում, կավահողում կամ սևահողում, այնպես էլ տառերը մի նյութից անցնելով մի այլ նյութի վրա, փոխել են իրենց տեսքը, ձևը:

Ահա ձեր առաջ մի քանի տող, գրված տառերը ժամանակ և տարբեր նյութի վրա (եջ 51):

Դուք տեսնում եք այնտեղ ուղիղ գծած տառեր՝ քարի վրա, կեռ ու մեռ գծեր՝ մոմի վրա, կոլոր, պարզ ու դյուրընթեռնելի՝ մագաղաթի վրա: Առաջին հայացքից թվում է, թե զբաղված տառերը լեզվի տառեր են, բայց իրոք՝ զբաղված են լատինական տառերով՝ միայն տառերը նյութի վրա և տարբեր միջոցներով:

MACELLIO FIBON
DIEC XUX AN I III

MACELLIO FIBON
DIEC XUX AN I III

IN FINEM PROPULO
QUII AS ANCTISLOS

Յեվ ինչ նյութեր ասեք, վոր չեն գործածվել գրելու համար:

Թուղթ ու մատիտը, վորոնց մենք այնքան ընտելացնել ենք, շատ ժամանակ չե, վոր գործածության մեջ են մտել: Հազիվ մի հինգհարյուր տարի սրանից առաջ դպրոցականի պայուսակում չկար վոչ թուղթ, վոչ տետրակի, վոչ մատիտ և վոչ էլ գրչածայր: Գրչի կամ մատիտի փոխարեն աշակերտի ձեռքին կար սրածայր փայտի մի կլոր — իսկ թուղթ ու տետրակի փոխարեն՝ մոմալատ տախտակի մի կտոր: Ինչ կասկած, վոր այդ պայմաններում գրելը դյուրին գործ չէր:

Իսկ յեթե անցնելու լինենք ավելի հեռուները — այն ժամանակները, յերբ զրբը հազիվ միայն առաջ եյին յեկել քարանձավաբնակ մարդկանց նկարածներից, — մենք կտեսնենք, վոր

գրելը, մեր ըմբռնումով, — միանգամայն անհնարին մի բան եր: Գրապիտուլյոնների մասին խոսք լինել, իհարկե, չեր կարող ամեն մեկն ինքը պետք է մտածեր, հնար գտներ, թե ինչի վրա և ինչով գրի:

Գրում եյին այն ամենի վրա, ինչ ձեռք եր ընկնում՝ փոշխարի թիակ, արմավենու տերե, խեցի գազանի մորթի, կեղև, — այդ բոլորը գործադրվում եր փորպես թուղթ. իսկ գրչին ել փոխավինում եր փայտի, փոսկորի կամ կայծքարի սրբածայր մի կտոր:

Գրելու այդ միջոցներից շատերը յերկար ժամանակ դեռ գոյություն են ունեցել: Ըստ ավանդության, Մուհամեդը ղուրանը գրել է փոշխարի թիակների վրա: Հույներն իրենց կարծիքը հայտնելիս են յեղել փոշ թե թղթի թերթիկների վրա, ինչպես այդ արվում է այժմ, կավե խեցիների վրա: Մինչև իսկ այն ժամանակ, յերբ արդեն պապիրուսի գյուտն արված եր, շատ գրողներ աղքատության պատճառով հնարավորություն չունենալով ոգտվելու գրանցից՝ հարկադրված են յեղել գրելու իրենց ամանեղենների կտորտանքների վրա: Ասում են, վոր մի հույն գիտնական կոտրատել է իր բոլոր կավե ամանները, վորպեսզի գրանց վրա գրի իր հեղինակությունները:

Բոլոր այդ վոսկրե, կավե, արմավենու տերեւների վրա գրված գրքերը մնացել են միայն թանգարաններում: Բայց կա այդ հին գրելու միջոցներից մեկը, վորից, մենք այժմ ել ոգտվում ենք, — դա քարն է:

Քարե գիրքը — ամենատեղեկանն է բոլոր գրքերից: Մրանից չորս հազար տարի առաջ յեգիպտական տաճարների, գերեզմանաքարերի վրա փորագրված ամբողջ պատմություններ են հասել մեզ: Մենք ել ենք փորագրում քարի վրա այն, ինչ վոր ուզում ենք, վոր յերկար ժամանակ գոյություն ունենա: Յեվ յեթե քարի վրա հաճախ չենք գրում, այդ միմիայն նրա համար, վոր դա այնքան ել դյուրին գործ չե և փոշ ել գործնական: Ի՞նչ կասեր ժամանակակից գրողը, յեթե նրան տային մուրճ ու բրնձ և հարկադրեյին իր հեղինակությունները քարի վրա գրել:...



Վուչ, մեր գրելու ներկա միջոցը լավ եւ ձիշտ է թուղթը հարատև չե, բայց կա արդյոք այնպիսի մի նյութ, վոր դիմացկուն լինի

քարի պես և կարելի չլինի նրա վրա գրել հեշտ ու արագ, ինչպես թղթի վրա:

Այդպիսի մի նյութ շատ հին ժամանակները գտել եյին բաբելացիներն ու ասորացիք, վոր յերբեմն բնակվելիս են յեղել Տիգրիսի և Յեփրատի հովտում: Կյունջուքում, Նինվե հինավուրց մայրաքաղաքի ավերակների մեջ, անգլիացի Լեյարդ անունով գիտնականը գտել է մի ամբողջ դրադարան, վոր պատկանելիս է յեղել ասորիների թագավոր Ասուրբանիպալին: Այդ դրադարանի բոլոր գրքերը պատրաստված են կավից:

Կավից պատրաստելով բավականին մեծ հաստ աղյուսներ՝ գրողը գրչի փոխարեն փայտի սուր ծայրը սկսում էր արագորեն շարժել կավե աղյուսի վրա. ստացվում եյին փորագրված սեպաձև գրերը: Հենց դրանից էլ բաբելացիների և ասորացիների գրերը կոչվում են սեպագիր: Ի՞նչ կասկած, վոր կավի վրա գրելն ավելի դյուրին էր և արագ էր կատարվում, քան թե քարի վրա:

Յեվ վորպեսզի այդ գրված աղյուսներն ավելի դիմացկուն ու ամուր լինեն, նախ չորացնում եյին արևի տակ, ապա փռում թրծում: Այժմ, իհարկե, բրուտը վոչ մի առնչություն չունի գրքի գործի հետ. բայց հին Ասորիքում բրուտը վոչ միայն կավե ամաններն էր թրծում, այլ գրքեր:

Բրուտի ձեռքով թրծած այդ գրքերը դառնում եյին քարի պես ամուր ու դիմացկուն և միանգամայն ապահովված եյին հրդեհից, խոնավությունից և մկների բաժին դառնալուց: Ճիշտ է, այդ գրքերը կտրատվում եյին, բայց այդ կը-

տորները կարելի չէր մի մի ժողովել և ամբողջացնել: Գիտնականները քիչ աշխատանք չենք դործ գրել Նինվեյում գտնված այդ գրքերի կտորանքները ի մի ժողովելու և դրանց կարգի դրելու, ամբողջացնելու համար:

Նինվեյի դրադարանում գտնվել են յերեսուն հազար աղյուսե գրքեր՝ բաղկացած բազմաթիվ յերեսներից: Յուրաքանչյուր գիրքը բաղկացած է մի քանի տասնյակ և էլ ավելի յերեսներից: Միացնել այդ գրքերի թերթիկների և կարելով մի ամբողջություն կազմել այնպես, ինչպես այժմ մենք ենք անում այդ, իհարկե, հարավոր չէր. Դրա համար էլ նրանք այդ բոլոր աղյուսները համարագրել և յուրաքանչյուրի վրա գրել են գրքի անունը:

Որինակ՝ աշխարհի ստեղծագործության մասին գիրքը սկսվում է այս խոսքերով. «Նախ այն, վոր վերևը դեռ յերկինք չէր կոչվում»: Յեվ այսպես այդ գրքի բոլոր աղյուսների յերեսների վրա գրված է «Նախ այն, վոր վերևը № 1», նախ այն վոր վերևը, № 2» և այսպես մինչև վերջ:

Բացի այդ, ինչպես ընդունված է, բոլոր գրքերի վրա դրադարանի դրոշմն է դրված:

Ասուրբանապալի պալատ. թագավոր զորաց, թագավոր ժողովուրդների, թագավոր Ասուրի յերկրի, վորին Նեբոս աստվածը և աստվածուհի Դամախտան շնորհել են զգաստություն և սուր աչքեր, վորպեսզի վորոնե իմ թագավորության մեջ գտնվող իրենց թա-



զավորին ծառայելու կոչված զբողները ստեղծագործու
թյունները՝ ի մի ժողովելու և տեղավորելու իմ ար-
քունիքում:

Ինչ զիրք ասեք, վոր չկար այդ գրադարա-
նում... այստեղ կգտնենք գրքեր, ուր նկարագրու-
ված է Ասորական թագավորների, և լիդիացի-
ների, Փյունիկիայի և Հայաստանի մինչև տեղի
ունեցած պատերազմների մասին, կան գլուցազ-
ներգություններ, պատմվածքներ անգրեթեկրյա
թագավորությունների, ջրհեղեղի մասին և այլն:

Կավի վրա վոչ միայն գրում էին, այլ տպա-
գրում: Թանկագին քարերից դրանաձև կնիքներ
էին պատրաստում, վրան ուռուցիկ նկարներ
փորագրում և այդ յերկար կնիքը կավի վրա
պտտցնելով ստանում էին ցանկացած գրերն ու
նախշերը:

Հետաքրքիրն այն է, վոր այժմ էլ նույն ձևով
են պատրաստում կտորեղենի նախշերը: Տպա-
գրական ուտացիոն մեքենան ևս նույն ձևով է
աշխատում:



ԺԱՊԱՎԵՆ-ԳԻՐԲ

Աղյուսից կամ կավից պատրաստված զիրքը
մեզ թվում է տարորինակ: Բայց ավելի տարո-
րինակ գրքեր էլ են յեղել հին Յեգիպտոսում:

Նեղոս գետի ափերի ճահճային մասերում յե-
գիպտացիներն ունեյին ընդարձակ դաշտավայ-
րեր, ուր փոքրիկ ու տարորինակ ծառեր էյին
բուսնում: Ասենք, դրանք ծառեր էլ չէին, այլ
ճահճային բույսեր, վորոնց բարձրությունը մի
փոքր ավելի յեր, քան մարդու հասակը: Այդ
բույսերն ուղղաձիգ ու վոզորի էյին, առանց
ճյուղերի, իսկ վերևում՝ միայն մի փունջ:

Այդ բույսը կոչվում էր պապիրոս: Շատ լե-
զուններով թուղթը մինչև այժմ էլ կոչվում է այդ
բույսի անունով: Գերմաներեն կոչվում է պապիր,
ֆրանսերեն՝ պապիե, անգլերեն՝ պեյպեր:

Այդ տարորինակ բույսը յեգիպտացիների ամե-
նահարազատ բարեկամն էր — նրանց ապրուստը,
անունդ մատակարարողը: Պապիրոսը շաղակում
ուսում էյին, նրա բաղցը հյուսթը խմում, նրա-
նից պատրաստում էյին թուղթ, հագուստ, փոտ-

նաման և մակուկներ: Ահա թե ինչ եր տալիս
յեգիպտացիներին արտաքինով կովի պոչի նը-
մանփող այդ բույսը:



Հռոմայեցի մի գրող, վոր անձամբ ականա-
տեսեցեղել հին Յեգիպտոսում պապիրուսի թուղթ
պատրաստելուն, թողել և յեգիպտացիների թըղ-
թի գործարանի հետևյալ նկարագիրը:

Պապիրուսի ցողունը ասեղով բաժանում էյին
բարակ և ըստ հնարավորութուն լայն շերտերի:
Այդ շերտերը, կամ թերթիկները հետո փակցնում
էյին միմյանց, այնպես, վոր ստացվում եր ամ-

բող յերես: Աշխատանքը կատարվում եր սեղան-
ների վրա՝ թըշված Նեղոս գետի տեղմով, վոր
այդ դեպքում փոխարինում եր սոսինձի:

Թերթիկները փակցնելով միմյանց, ծայրերը
կտրում էյին և ապա վերևից հակառակ ուղղու-
թյամբ թերթիկներից մի շերտ և շարում, այն-
պես, վոր ստացվում եր գործվածքի ձև: Յեվ
յերը արդեն մի շարք այդպիսի թերթիկներ պատ-
րաստ էյին լինում, դարսում էյին միմյանց վրա,
վրայից դնում ծանրոցներ և սղմում: Հետո ար-
դեն թերթիկները չորացնում էյին արևի տակ և
ապա ժանիքով կամ խեցիներով հղկում:

Պապիրուսի թուղթ ել, մերինի պես, շատ տե-
սակներ ուներ: Թղթի ամենաբնորոք տեսակը պա-
տրաստվում եր պապիրուսի ցողունի միջին մա-
սից: Այդ թղթի լայնությունը տասներեք մատ-
նաչափ եր, այսինքն մի քիչ ավելի լայն, քան
մեր աշակերտական տետրակները: Յեգիպտացի-
ները թղթի այդ տեսակը անվանում էյին «նվի-
րական» — սուրբ, վորովհետև այդ թղթի վրա էյին
գրում իրենց սուրբ գիրքը:

Հռոմայեցիները, վոր թուղթը գնում էյին յե-
գիպտացիներից, այդ թուղթը, վորպես լավ տե-
սակի թուղթ, ի պատիվ իրենց Ավգուստ թագա-
վորի, «թուղթ Ավգուստի» էյին կոչում, իսկ յերկ-
րորդ տեսակը, նրա կնոջ անունով՝ Լիվայի
թուղթ:

Պապիրուսի թղթի ամենավատ տեսակը կոչ-
վում եր «առևտրականների թուղթ», վորի լայ-
նությունը վեց մատնաչափից ավելի չեր լինում

և գործադրվում եր միայն ապրանքներ փաթաթելու համար:

Թղթի ամենամեծ գործարանը յեգիպտական Ալեքսանդրիա քաղաքումն եր: Այստեղից ել մնացել ե «ալեքսանդրյան թուղթ»-ը, թղթի մի ընտիր տեսակը, վոր մինչև այժմ ել այդ անունով ե կոչվում: Թղթի այդ գործարանն եր Հոմին, Հունաստանին և արևելյան շատ յերկրներին թուղթ մատակարարողը:

Պապիրուսի թղթի լայնությունը 6 — 13 մատնաչափ եր, իսկ յերկարությունը՝ հարչուր ե ել ավելի մետր: Դրա պատճառն այն եր, վոր այդ թուղթը ծալվելուց կտրատվում եր



և հնարավոր չեր դրանից այն ձևի դիրք ունենալ, ինչպես մեր ներկա թղթից պատրաստածն ե: Յեգիպտացիներն այդ դրությունից շատ ճարպիկ կերպով են դուրս յեկել և անա թե ինչպես: Նրանց գրքերը պապիրուսի թղթի յերկար ժապավեններ եյին. խողովակի նման վորորած, այնպես, ինչպես մեր աշխարհագրական քարտեզները կամ թե՛ լրագրո-ներն ընթերցարաններում: Գիրքը յերկու կողմից հագցնում եյին փայտին և ապա կախում պատից, կամ թե բռնում ու կարդում:

Ժապավեն-գիրքը, յեթե մեծ ծավալով եր մի քանի կտորներից եր բաղկացած լինում:

Այն ժամանակվա գրախանութները հիշեցնում են մեր այժմյան պատաստի խանութները: Դարակներում դարսված խողովակաձև գրքերից յու-

րաքանչյուրի վրա կախված եյին տոմսեր, վորոնց վրա գրված եյին գրքի անուններ:

Պապիրուսի վրա գրում եյին թանաքով: Բայց այն ժամանակվա թանաքը մերինի պես չեր, այլ հասարակ, ջրախառն մուր եր, այնպես, վոր գրածը ջնջելու համար մեր ներկա ուտինին հեշտությամբ փոխարինում եր սպունգը: Ասենք շատ դեպքերում սպունգն ել պետք չեր լինում, քանի վոր դրան փոխարինում եր գրողի լեզուն: Պատմում են, վոր բանաստեղծների մրցման ժամանակ, վոր տեղի յեր ունենում Հոմում, Կալեգուլա թագավորի պալատում, անհաջող համարված բանաստեղծությունների հեղինակները հարկադրված եյին լինում իրենց իսկ լեզվով լիզելու, վոչնչացնելու հավանության չարժանացած իրենց հեղինակությունները:

Նրանց գրիչը յեղեգնից եր:

Ինչ կասկած վոր պապիրուսի վրա գրիչն ավելի հեշտ եր, քան թե քարի վրա: Յեթե քարի վրա մի բան գրելու համար ժամեր եյին գործադրվում պապիրուսի վրա մի րոպեյում եր կատարվում նույն գործը: Յեվ զարմանալի չե, յեթե պապիրուսի վրա նշանագրերն այն համաչափ ու գեղերուսի վրա նշանագրերն այն համաչափ ու գեղեցիկ տեսքը չունենային, ինչ վոր քարի վրա: Արագ և շտապ գրելը պարզ ու հասարակ ձև տվեց գրքերին:

Յեվ այդ գրքերին պարզ ու հասարակ ձև տվողը հասարակ ժողովուրդն եր: Բուրմերը դեռ շարունակում եյին հինը:

Յեգիպտացիներն ի վերջո ունեցան յերեք

տեսակի գրութիւն՝ հիերոգլիֆ, հոգեոր գասի
կամ քուրմերի գրերը և ավելի պարզ՝ ժողովրդա-
կան գրեր:

Ապա թե ինչ հեղափոխութիւն մայրեց լե-
զիպտական գրերի մեջ պապիրուսի դյուտը:



Գ Լ Ո Ւ Ն III


Մ Ո Մ Ե - Գ Ի Ր Ք

Մոմը բոլորին ծանոթ բան է. բայց մոմից
պատրաստված գիրքը շատ քչերին վիճակված
կլինի տեսնել: Այնպիսի գիրք, վոր կարելի յե
հալել ինչպես յուղ, ավելի զարմանալի բան է,
բան թե կավե գիրքը կամ ժապավեն-գիրքը:
Հագիւլ թե շատերին հայտնի լինի, վոր մոմե գրե-
քույկները, վոր հնարված են հին հռոմայեցիների
որով, գործածութեան մեջ ելին գտնվում դեռ
մինչև անցյալ դարի սկիզբները, մինչև ֆրանսի-
ական մեծ հեղափոխութիւնը:

Մոմե գրքույկն այն տեսքն ուներ, ինչպես
այստեղ նկարված է:

Գրքի առաջին և վերջին տախտակը կամ, այս-
պես ասած, շապիկը մոմով ծածկված չէ, իսկ
միջի տախտակների մեջ տեղը տաշված ու խո-
րացված է, ապա այդ տարածութիւնը լցված է
մոմի շերտով, այնպես, վոր գիրքը ծածկելիս
գրքի փայտե շրջանակի յեզրերն են միմյանց
կաշոււմ և մոմածածկ մասն իրար շփվելուց ազատ
պահոււմ:

Բայց ի՞նչով եյին գրում մոմե գրքերը: Իհարկե՞
վոչ թանաքով և վոչ ել գրչով. գրիչը դեռ գոյու-
թյուն չունեւր. գրում եյին պողպատե փոքրիկ
ձողիկով, վոր կոչվում եր սախլ-վոճ: Սախլի սուր
ծայրով գրում, կամ ավելի ճիշտը չանդոտում
եյին, իսկ մյուս՝ բութ ծայրովը հղկում, հար-
թում այն բոլորը, ինչ ավելորդ եր և սխալ:



Մոմե գրքույկ-
ները շատ եժան
եյին իսկ պապիրուս-
ը՝ թանկ: Պապի-
րուսը բերվում եր
հեռու Յեզիպոտից
և գործադրվում մի-
միայն գրքերի հա-
մար, իսկ մոմե գր-
քույկները գործա-
դրվում եյին սեւ-

գրությունների, հաշիվների, նամակների և առ-
հասարակ վոչ մնայուն գրությունների համար:

Մոմե գրքույկները ձեռնտու եյին նաև այն
պատճառով, վոր շատ յերկար ժամանակ եյին
գործածվում: Սովորաբար հոռոմայեցիներն իրենց
գրածի պատասխանն ստանում եյին հենց նույն
գրքույքով կամ նյութի վրա, վորով ուղարկված
եր նամակը: Կարելի չեր անվերջ կերպով գրել
և գրածը ջնջել ու նորից գրել:

Բայց մոմե գրքույկները մի ուրիշ պակասու-
թյուն ունեյին: Պատահում եր, վոր գրություն
տեղ եր հասնում միանգամայն փոխված: Գաղտ-

նի և կարևոր գրությունները հաճախ տեղ եյին
հասնում կեղծված վիճակում: Կեղծողները սախ-
լով հղկում եյին գրվածքը և տեղը իրենց ցան-
կացածը գրում: Վորպեսզի այդպիսի բան տեղի
չունենա, ահա թե ինչ եյին անում: Կարևոր գրու-
թյունները գրելուց հետո՝ վրան ավելացնում եյին
մոմի մի նոր շերտ և ապա նորից գրում, այս
անգամ արդեն վոչ կարևոր բաներ: Գրություն-
ներն այդպիսով յերբեմն մի քանի շերտից կամ
հարկից եյին լինում: Կարևոր գրություն սպա-
սողն այդ շերտերը հղկում եր, մինչև վոր գրու-
նում եր իր ուզածը:

Լատինական տառերը, վոր քարի վրա ուղղա-
գիծ եյին, պապիրուսի վրա դարձան ծուռ ու մուռ,
իսկ մոմի վրա՝ արդեն գրեթե անընթեռնելի:

Փորձեցե՛ք ինքներդ պատրաստել մոմի թեր-
թիկ և վրան գրել: Դուք կհամոզվեք, թե վորքան
դժվար ե գրելը: Միայն այժմ, յերբ մեր տրամա-
մադրության տակ կա շատ եժան գնով թուղթ
ու մատիտ, պետք չենք զգում մոմի գրքույկ-
ների, բայց մի քանի հարյուր տարի սրանից
առաջ, դպրոցականի պայուսակի զարդը, ինչպես
և ամեն մի գրագետի անհրաժեշտ առարկան՝ մոմի
տետրերն եյին:

Դպրոցականների ձեռքով գրված մի ամբողջ
կույտ՝ նման գրքույկներ և սախլներ են գտնված
Լյուբեկ քաղաքի սուրբ Հակոբ կոչված վանքում:
Նույն տեղ գտնված են նաև անթիվ ճիպտաներ,
վոր գործադրել են ժամանակի «մանկավարժ-
ները» աշակերտներին ծեծելու համար: Դպրոցա-

կանը փոխանակ ասելու «յես սովորում եմ», ասում եր «յես խարազանվում եմ»: Այն ժամանակվա աշակերտների համար խարազանվել ու սովորել բառերը հոմանիշ բառեր էին:

Մի լատիններեն դասագրքում, վոր կազմված է սրանից մոտ հազար տարի առաջ, բերված է հետևյալ բնորոշ խոսակցությունն աշակերտի և ուսուցչի միջև:

ԱՇԱԿԵՐՏ. Մենք, աշակերտներա, խնդրում ենք քեզ, ուսուցիչ, սովորեցնել մեզ լատիններեն ուղիղ կերպով խոսել և գրել, վասնզի մենք տղետ ենք և անուսում:

ՈՒՍՈՒՑԻՉ. Կամենում եք դուք խարազանվել:

ԱՇԱԿԵՐՏ. Ավելի լավ է խարազանվել, քան թե մնալ անուս ու տղետ:


Փարիզում,—13-րդ դարում, կային նույնիսկ հատուկ արհեստանոցներ և մոմե գրքույկներ պատրաստող արհեստավորների մի առանձին համքարություն:

Բայց ո՞ր են այժմ այդ միլիոնավոր գրքույկները... Դրանք վաղուց են այրված ու վոջնչացված՝ այնպես, ինչպես մենք ենք վարվում մեր ավելորդ ու անպետք թղթերի հետ: Բայց այժմ ինչեր չէյինք տա յերկու հազար տարի առաջ գրված նման մի գրքույկի:

Հռոմեյական այդ գրքույկներից մեզ հասել են շատ քիչ որինակներ, այն էլ մեծ մասամբ գտնված Պոմպեյում, Յիցիլիա, Յուկանի տանը:

Ինչպես հայտնի յե, Պոմպեյն ու դրա հետ միասին Հերկուլանումը, վոր գտնվելիս են յեղել Վեգուվի ստորոտում, վերջինս ժայթքումից ծած-

կվել են լավայով: Զարմանալի չե՞, վոր յեթե Վեգուվի ժայթքումը չլիներ, հազիվ թե, այդ հնությունները հասնելին մեզ: Բնության այդ անեղ արհավիրքն է դարձյալ պատճառը, վոր Հերկուլանումի փլատակների և մոխիրների տակից դուրս են հանված հին Հռոմից մեզ հասած 24 հառ պապիրուսի գրքեր:



Կ Ա Շ Վ Ե Գ Ի Ր Ք

Դեռ այն ժամանակները, յերբ պապիրուսն իր փառքի գագաթնակետին եր հասած, դրան մի ուժեղ մրցակից դուրս յեկավ. — դա կաշին եր, վոր հետո մագաղաթ (պերգամենտ, կոշվեց):

Ուշանարած ժողովուրդները գրում եյին գագաններ ի կաշվի վրա: Բայց կաշին զրենական եր՝ մագաղաթ դարձավ այն ժամանակ, յերբ մարդիկ հետագայում սկսեցին ավելի լավ պատրաստել: Ըստ ավանդութան, այդ բանը տեղի յե ունեցել անա թե ինչ պայմաններում:

Յեզիպտական Ալեքսանդրիա քաղաքում կար մի հրաշալի գրադարան, վորտեղ ժողովված եր ավելի քան մեկ միլիոն գիրք: Գրադարանի ընդարձակման ու բարեկարգման գործով զբաղված եյին փարավոնները: Յերկար տարիներ այդ գրադարանը մեծ հռչակ եր վայելում և առաջինը համարվում ամբողջ աշխարհում: Այդ գրադարանին մի ուժեղ մրցակից ե դուրս գալիս — Պերգամ կոչված քաղաքի գրադարանը՝ Փոքր

Ասիայում: Այդ ժամանակի թագավորող փարավոնը առաջնորդութունն իր ձեռքը պահելու համար վորոշում ե անխնա պայքար մղել Պերգամի գրադարանի դեմ: Փարավոնի ձեռք առած այդ հալածանքներից մեկն ել այն ե լինում, վոր արգելում ե պապիրոսի արտահանութունը դեպի Փոքր Ասիա:

Պերգամի թագավորը դրան պատասխանում ե նրանով, վոր իր յերկրի բոլոր լավ վարպետներին հանձնարարում ե վոշխարի և այծի կաշուց պատրաստել գրելու համար այնպիսի մի նյութ, վորը կարողանա փոխարինել պապիրուսին: Այստեղից անա Պերգամ քաղաքը յերկար ժամանակ ամբողջ աշխարհում հռչակված եր վորպես ընտիր մագաղաթ պատրաստող վայր: Հենց իր, քաղաքի անունով ել այդ թուղթը կոչվեց պերկամենտ:

Մագաղաթը պապիրուսից մի քանի առավելութուն ուներ: Մագաղաթը կարելի յեր հեշտ կերպով կտրել, առանց յերկյուղ կրելու, վոր կաշուի ե կտրտվել, փշանալ: Մագաղաթն ել սկզբում, ինչպես և պապիրուսը, վորորում եյին խողովատեւրակ շինել և ապա գրքեր կարել: Այդտեղից ել, անա վերջապես առաջ ե գալիս գիրքը՝ կաղված առանձին-առանձին թերթիկներից:

Վոշխարի, այծի կամ հորթի կաշին նախ թրջում և ապա մոխրաշրում են, վորպեսզի կակղի և մագերը հեշտությամբ պոկվի կաշվից: Դրանից հետո կավճով շփում եյին կաշին և ապա պեմզայով հղկում ու հարդարում, այնպես,

վոր ստացվում եր վողորի, յերկու կողմից հարթ, մի փոքր դեղնավուն — թուղթ:

Վորքան կակուղ եր մագաղաթը, նույնքան թանգ եր գնահատվում: Յերբեմն այնքան բարակ եյին պատրաստում, վոր կարելի չեր մի ամբողջ կաշի տեղավորել ընկույզի կճեպի մեջ: Այդպիսի մի հետաքրքիր մագաղաթ տեսել ե հռոմայեցի հոետոր Յիցերոնը: Այդ մագաղաթի վրա գրված են յեղել Իլիականի բոլոր 24 նշանավոր յերգերը:


Մագաղաթն ուներ նաև այն առավելությունը, վոր, հակառակ պապիրոսի, գրվում եր յերկու յերեսի վրա:

Յեվ հետզհետե պապիրոսն սկսում ե իր ալնքան բարձր դիրքերը զիջել մագաղաթին: Պապիրոսի գործածությունն իսպառ վերջանում ե Յեվրոպայում, յերբ արաբները նվաճելով Յեզիպոսը՝ միանգամայն արգելք են դնում նրա արտահանությանը: Ահա այդ ժամանակ հաղթող ե հանդիսանում մագաղաթը: Վերահաս պատերազմներն ընկճում են յերբեմն մեծ ու խրոխտ հռոմեական կայսրությունը՝ միանգամայն ամայի դարձնում նրա շեն ու ծաղկած քաղաքները: Վսչ միայն ուսումնական ու զարգացած մարդկանց թիվն ե որեցոր նվազում, այլև հասարակ գրագետները:

Այդ ընդհանուր ամայության մեջ միայն հատ ու կենտ վանականներն եյին, վոր աշխարհից մեկուսացած՝ իրենց խցերում «աստվածահաճ» գործ եյին կատարում իրենց հոգու փրկության համար

արտագրելով այս կամ այն կրոնական գիրքը:

Վանականը կարիք չուներ շտապելու: Նա իր ձեռքի «Ղալամը» — յողեգնյա գրիչը շարժում ե դանդաղորեն, ամենայն խնամքով, նախորոք «կապարե ձողիկով» գծած մագաղաթի վրա: (Ի դեպ՝ պետք ե ասել, վոր «կապարե ձողիկը» մեր ներկա մատիտի նախահայրն ե):



Վանականը մագաղաթի վրա գրում ե շատ խիտ ու մանր: Մագաղաթը թանկ եր, պետք եր խնայողություն անել: Չիշտ ե, յերբեմն յերբեմն այս կամ այն արկածախնդիր իշխանը, բաժրաստիճան պաշտոնյան, կամ վաճառականը, կատարած անթիվ ու անհամար մեղքերից ազատվելու, «թողություն հայցելու» համար մագաղաթ եր նվիրաբերում «սուրբ հորը», բայց չէ՞ վոր մի մեծ գիրք գրելու համար վոչխարի մի ամբողջ հոտի կամ հորթի մի նախիրի կաշի յեր պետք:

Դարձյալ մագաղաթի թանկութիւնն եր պատճառը, վոր հին գրքերում շատ խոսքեր կըր- ճատ եյին գրում: Որինակ՝ փոխանակ գրելու ամենայն, ամսված, սուրբ, քրիստոս և այլն, գը- րում եյին՝ ամ, ած սուրբ քս, և այլն:

Վերև բերած նկարը (տես 71 եջ) մեզ դա- ղափար կտա, թե ինչ տեսք ունէր մագաղաթե գիրքը: Դարեր առաջ գործադրվող մագաղաթե գրքեր այժմ ել, թեև քիչ քանակությամբ, կա- րելի չե տեսնել թանգարաններում:



ԳԼՈՒԽ V.

Թ Ղ Թ Ի Ն Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը

Ինչպես վոր պապիրուսը մագաղաթին տեղի տվեց, այնպես ել՝ մագաղաթին եր վիճակված վերջիվերջո իր դերքերը զիջելու մեզ բոլորիս ծանոթ թղթին:

Թղթի գյուտն արված ե Զինաստանում: Մոտ 2000 տարի սրանից առաջ, յերբ հույներն ու հռոմայացիները դեռ պապիրուսի վրա գրում եյին, չինա- ցիներն արդեն գտել եյին թուղթ պատ- րաստելու միջոցը:

Չինացիները թուղթ պատրաստե- լու համար վորպես հում նյութ գործ եյին ածում բամ- բակի թելերը, մի քանի խոտեր և հին կտորե- ղեններ: Այդ նյութերը տեղավորելով քարե սանդի մեջ՝ ջուր եյին ավելացնում և այնքան խառնում



ու տրորում, վոր դառնում եր թանձր հեղուկ։
Յեւ այդ հեղուկից ել անաթուղթ ելին ձուլում։
Թղթի ձուլման համար իբրեւ կազապար եր
ծառայում ցանցապատ մի շրջանակ, պատրաստ-
ված յեղեգնյա բարակ ձողերից և մետաքսյա
թելերից։ Հեղուկը անհրաժեշտ քանակութեամբ
ածելով կազապարի մեջ, սկսում ելին տրորել։
Տրորելուց շուրջ ցանցի ծակոտիներից ծորում
եր, իսկ հեղուկի ավելի թանձր մասը դառնում
թաղիքանման մի զանգված։ Այդ զանգվածը դեռ-
ևս թաց վիճակում, հարթում, հավասարեցում,
տափակում ու բարակացնում ելին և ապա դը-
նում արևի տակ ու չորացնում։ Այդ չորացրած
թերթիկները դնելով փայտյա սեղմիչների տակ
ցանկացած ձև ու հարթություն ելին տալիս
թերթերին։

Ձինացիներն այժմ ել դեռևս այլ միջոցներով թուղթ են պատրաստում:

Զարմանալի հնարագետ և մեծ համբերության տեր ժողովուրդ են այդ չինացիները: Ո՞վ կարող է ասել, վոր մի շարք կարևոր գյուտեր, ինչպես որինակ վառողի—հախճապակու, տպագրության և վերջապես թղթի գյուտարարները նրանք են:

Յեվրոպացիները թղթի գոյության մասին սկսում են գաղափար կազմել դրա գյուտից շատ տարիներ հետո միայն և ահա թե ինչպես:

704 Թվին արաբները նվաճում են միջին Ասի-
այի Սամարղանդ քաղաքը։ Նրանք այդտեղից
իրենց հետ տանում են թուղթ պատրաստելու
գաղանիքը։

Յեւլ ահա, արաբները կողմից միմյանց յետևից նվաճված յերկրներում—Սիրիյիայում, Իսպանիայում և Սիրայում—սկսվում են յերևան գալ թղթի գործարանները։

գալ թղթի գործարանները։
Անցնում են դարեր, մինչև վոր Յեվրոպան
ունենում է իր թղթի գործարանները, կամ՝ «թղթի
շրագանները», ինչպես անվանելիս են յեղել այն
ժամանակները թղթի գործարաններին։ Նման ջր-
րագանների յերևան գալը Յեվրոպայում սկսվում
է XIII դարից — սկզբում Գերմանիայում, Ֆրան-
սիայում, Իտալիայում, և հետո միայն Ռուսաս-
տանում։ Ռուսաստանում առաջին թղթի գոր-
ծարանը, կամ ջրագացը հիմնվում է Մոսկվայից
30 վերստ հեռավորության վրա գտնվող Յանինո
գյուղում։

Գլուխըսում։
Սկզբում թուղթը լավ ընդունելություն չի
գտնում։ Թուղթը գործադրելիս են յեղել միմի-
այն վոչ կարևոր գրությունների համար։ Գտնում
են, վոր թուղթը շուտ վոչնչացող նյութ ե և
չարժե դրա վրա կարևոր բաներ տպագրել։ Գըր-
քերի համար դարձյալ մագաղաթն եր գործադր-
վում։ Սակայն հետզհետե թուղթն սկսում ե դուրս
մղել մագաղաթը. վորովհետե թուղթը նախ՝ շատ
եժան եր, յերկրորդ՝ նրա վորակը գնալով բարձ-
րանում եր։ Այնպես վոր մի հարյուր տարի անց՝
մագաղաթե գիրքն սկսում ե հազվագյուտ դառ-
նալ։

Նախ՝ Ուրբիշ կերպ եւ լինել չեր կարող: Ուսումնա-
կան ու գրադեա մարդիկ այժմ միայն հեզկերպ-
բախանները չեյին, ինչպես այդ մի ժամանակ եր:

Ամեն տեղ արդեն սկսվում են վոչ միայն դրպ-
րոցներ բացվել, այլ և համալսարաններ: Ուսման
ձգտող յերևտասարգությունը, մանավանդ դրա
աղքատ դասը, վերտեղից կարող եր այնքան դրամ
ունենալ մագաղաթ գնելու համար: Յեւ վայստեղ
ե ահա, վոր թուղթը հրապարակի տերն ե դառ-
նում ու հաղթանակում:

1155 թվին Գերմանիայի Մանց քաղաքում,
Հովհանն Գսւտտեմբերգը առաջին գիրքն ե տպա-
գրում:

Ճիշտ ե, այդ գիրքը գլխատառեր չուներ,—
գլխատառերի տեղը բաց եր և դա լրացնում եր
մի փորձված գրագետ,—բայց ամբողջ գիրքը տպա-
գրված եր տպագրական մեքենայով: Ճիշտ ե նաև,
վոր տպագիր տառերը դեռ այն գեղեցկությունը
չունեյին, ինչ վոր հետագայում ունեցան, բայց
և այնպես, տարբերությունը ձեռագիր տառերի
համեմատությամբ—հսկայական ե:

Գոլտտեմբերգի գյուտից ուղիղ 57 տարի հետո,
այսինքն 1512 թվին Վենետիկում (Իտալիա)
տպագրվում ե առաջին հայերեն տպագիր գիրքը:
Այդ գիրքը կոչվուր եր «Պարզատումար»: Դրա
հաջորդ տարին, նույն տեղը տպագրվում ե չորս
գիրք ել և ապա ամբողջ 50 տարի ընդմիջումից
հետո, դարձյալ նույն տեղը, տպագրվում ե մեկ
գիրք—«Սաղմոս»:

Առաջին հայերեն տպարանը հիմնվում ե Կ. Պոլ-
սում 1567 թվին:

Տպագրությունը Ռուսաստանում սկսվեց 1564
թվին, իսկ Ամերիկայում՝ 1640 թվին:

Տպագրական մեքենայի գյուտը թղթի պա-
հանջն ել ավելի մեծացրեց: Տարեց տարի տպա-
րանից դեպի գրախանութները տարվող գրքերի
թիվն սկսեց շատանալ: Այժմ արդեն հին փալաս-
ները չեյին բավարարում պահանջված քանակու-
ները թուղթ պատրաստելուն: Պարզ եր, վոր
պետք ե միջոցներ փնտռեյին թուղթ պատրաս-
տելու համար նորնյութեր գտնելու: Յերկար փոր-
ձերից հետո գտան, վոր թուղթ կարելի յե պատ-
րաստել փայտից:

Այժմ կտորներից ու փալաններից պատրաս-
տում են միայն ընտիր տեսակի թուղթ: Գրելու,
լրագրական, փաթաթելու և այլ տեսակի թղթերը
պատրաստում են փայտից:

Թուղթը, վոր ամենաշատ գործածվող պի-
տույթներից մեկն ե, արժե իմանալ, թե ինչպես
ե պատրաստվում:

Տանտիկինը դեն ե շարտում մի հնացած շա-
պիկ, վոր այլևս վոչ մի բանի պետք չե: Յերկ-
րորդ որն այդ բակն ե մտնում անպետք իրեր
ժողովող մեկը և այդ շապիկը վեցնում ու տա-
նում այն հատուկ պահեստը, ուր նման իրեր են
ժողովում: Պահեստում նման անպետք հագուստ-
ներից ու փալաններից հակեր են կապում յեւ
ուղարկում թղթի գործարանը:

Գործարան մտնելուն պես, հակերն անմիջա-
պես ախտահանվում են բարձր աստիճանի ջեր-
մության տակ՝ գոլորշիով և ապա՝ չորացնելուց
հետո, սկսում են մաքրել փոշուց: Փոշին մաք-
րելու համար կա հատուկ մեքենա, վոր առանց փո-



շու ամպեր բարձրացնելու մաքրում ե որական մի քանի հարյուր փութ:

Այդ մաքրված փալանները գցում են կտրտող մեքենայի տակ: Մեքենան մի ակնթարթում փալանները մանր կտրտում ե, վորից հետո կտորտանքները լցնում են մի մեծ կաթսայի մեջ ե յեփում կրի հետ միասին: Յեփած կտորներն առանձին մեքենայով աղում են ե ձերմակ դույն տալիս, այնպես, վոր ստացվում ե ձերմակ մի զանգված:

Աշխատանքի առաջին մասը կատարված ե, մնում ե յերկրորդ դժվարին մասը — զանգվածը թափել, թուղթ դարձնել: Այդ բանի համար կա մի խոշոր մեքենա՝ — թուղթ թափող մեքենա:

Ճիշտ ասած, դա մի մեքենա չե՝ այլ մեքենաների մի ամբողջ շարք՝ միացած միմիանց: Այդ մեքենաշարքը մի ծայրից իր մեջ ընդունելով թղթի այդ զանգվածը մյուս կողմից թուղթն ե հանում միանգամայն պատրաստի վիճակում, անգամ կրտրած ըստ ցանկացած չափի ու ծավալի:

Մեքենա կա, վոր որական 6000 փութ թուղթ ե պատրաստում: Թղթի մեքենայի մոտ գրեթե մարդ չի յերևում, բայց գործը ընթանում ե գրլխապտույտ արագությամբ:

Փայտից ել գրեթե նույն ձևով են թուղթ պատրաստում: Տարբերությունը միայն աշխատանքի առաջին մասում ե. փայտը մանր կտորտանքներ դարձնելու համար կան ավելի խոշոր մեքենաներ. բացի այդ՝ փայտը յեփվում ե վոջ թե կրով, այ թթվումով — մի բաղադրություն, վոր ավելի կազմալուծիչ ու քայքայիչ հատկություն ունի, քան կիրը:

Մեր թուղթն ամեն տեսակի առավելություն ունի, բացի մի բանից, — նա դիմացկուն չե — դիմացկուն չե այնպես, ինչպես մեր նախահայրերի գործածած թուղթը, — պալիրուսը, մագաղաթը ե այլն: Կդիմանան մեր գրքերը մեզանից հազար տարի հետո: Հագրիվ թե: Մի վանականի ձեռքով միջին դարերում մագաղաթի վրա գրած մի ձեռագիր գիրքը գուցե ավելի յերկար կյանք մի ձեռնարկ գիրքը աներկա գիրքը ապագայի նկատմամբ:

Մեր թուղթը շատ քիչ նմանություն ունի առաջին տպագրված գրքի թղթին, բայց մեր գրլիչն ել ավելի քիչ նմանություն ունի այն գրլիչներին, վորով գրում եյին մեր նախնիքները: Մնացել ե միայն անունը: Դա հաճախ ե լինում. անունը մնում ե, իսկ առարկան՝ վոչ: Գրչահատը վաղուց այլևս յեղեգնյա կամ փետուրե գրիչ չի հատում, բայց մինչև այժմ ել դեռ այդ անունը կրում ե իր վրա:

Յոթ տարի առաջ արժեք, վոր մարդիկ տոհմային պողպատե գրչի 100-ամյակը: 1826 թվին Մոզոն անունով մեկը պողպատե գրչի գյուտն

արավ: Պողպատե գրչի յերևան գալուց հետո միայն
հրապարակից չքացավ փետուրե գրիչը, վոր մարդ-
կության ծառայել եր ուղիղ տասը դար:

Մատիտը հարյուր տարով մեծ ե, քան գրիչը:
Ֆրանսիացի ժոկ Կոնտե անունով մեկն առաջինը
գտավ մատիտ պատրաստելու միջոցը: Մատիտը
պատրաստվում ե կրաքարի փոշուց և կավի խառ-
նուրդից: Կավը խառնվում ե կրաքարի փոշուն
նրա համար միայն, վոր ավելի դիմացկուն լինի:
Մատիտը և պողպատե գրիչը, ինչպես և դրանց
նախորդները — ստի՛ն ու փետուրե գրիչը — թը-
վում ե, վոր յերկար կյանք չեն ունենա: Գրա-
մեքենան արդեն դուրս ե վանում գրիչը գրա-
սենյակներից: Չենք կասկածում, վոր մոտիկ ապա-
գայում յուրաքանչյուր դպրոցական կունենա իր
գրպանի գրամեքենան:



ԳՐՔԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հատինական առածն ասում ե՝ գրքերն ել
իրենց ճակատագիրն ունեն: Հաճախ գրքերի ճա-
կատագիրն ավելի դարմանալի յե, քան մարդ-
կանցը:

Ահա որինակ, հույն բանաստեղծ Ալկամանի
բանաստեղծությունների ժողովածուն: Այդ պա-
պիրուսի գիրքը հասել ե մեզ շատ տարորինակ
ձևով: Դա վաղուց փոշնչացած կլիներ, յեթե թաղ-
ված ջրներ շատ սովորական կերպով, այնպես,
ինչպես մարդուն են թաղում:

Նին յեղիպտացիների մեջ սովորություն կար,
մումիան — մարդկանց գմուսած դիակը — թաղե-
լիս՝ պամբանի մեջ դնել նաև մեռնողի թղթերն
ու գրքերը: Հաղարավոր տարիներ առաջ այդ
թաղված գրքերը միանգամայն անփլաս վիճակում
հասել են մեզ այդ ձևով միայն: Այդպիսով յե-
ղիպտական գերեզմանները կորստից փրկել են
շատ գրքեր, մի բան, վոր վոչ մի գրադարան չէր
կարող անել: Յեղիպտական ամենամեծ ու նշա-
նավոր գրադարանը Ալեքսանդրիայի — այրվել

ե Հուլիոս Կեսարի լեզդիոնների ձեռքով այդ քաղաքը գրավելու ժամանակ: Հրդեհի ճարակ դարձած այդ միլիոնավոր գրքերի մեջ քանի՜ քանի՜ արժեքավոր գրքեր են վոջնչացել... Այդ բոլորից մեզ հասել ե գրադարանի գրացուցակից հատվածներ միայն:

Բայց ավելի զարմանալին այն գրքերն են, վոր փրկվել են կորստից միայն նրա համար, վոր մարդիկ փորձել են վոջնչացնել նրանց բովանդակությունը:

Միջին դարերում, յերբ մագաղաթը շատ թանկ եր, սլատահում եր, վոր մի հին ձեռագիր ձեռք ընկնելիս դանակով քերում եյին գրվածքը և նրա տեղը գրում շատ անգամ միանգամայն անարժեք ու զուտ կրոնական բաներ: Կային նույնիսկ հատուկ այդ գործով զբաղվողներ՝ գրքեր քերծող, վոջնչացնողներ:

Շատ գրքերի մասին գաղափար չեյինք ունենալ յիթե այդ դահիճների ձեռքով քերծված գրքերը, կամ ինչպես անվանում են, կրկնագիր մագաղաթը վերականգնելու միջոցը չգտնվեր մեր ժամանակներում:

Թանաքն այնքան խոր ե թափանցում մագաղաթի մեջ, վոր ամենադաժան գործողն անգամ չեր կարող գրվածքի հետքը կորցնել: Բավական եր յերբեմն թրջել ձեռագիրն այս կամ այն քիմիական բաղադրությամբ, վորպեսզի յերևան գա հին բնագիրը: Բայց մի շտապեք ուրախանալու: Հաճախ այդ գործողությունից հետո, հազիվ հայտնաբերված գրքերը սկսում են սևանալ և վերջի-

վերջո միանգամայն անընթեռնելի դառնալ: Այդպես ե լինում, այն ժամանակ, յերբ փորձ են անում կենդանացնելու կրկնագիր մագաղաթը քիմիական բաղադրությամբ:

Յերկու անգամ մեռած նման ձեռագրեր կարելի չե տեսնել նշանավոր մեծ թանգարաններում և գրադարաններում:

Վերջին ժամանակները սկսել են ոգտագործել մի այլ բաղադրություն, վորը շատ կարճ ժամանակով յերեվան ե հանում գրվածքը: Գրվածքը յերևան հանած վարկյանին լուսանկարում և անմիջապես սրբում են բաղադրությունը, վորպեսզի կրկնագիր մագաղաթը միա դարձյալ իր նախկին վիճակում:

Իսկ ամենավերջին տեղեկությունները համաձայն՝ իբրեւ թե գտնվածի մի միջոց, վոր առանց փորեւ քիմիական բաղադրության՝ լուսանկարվում ե կրկնագիր մագաղաթը:

Բայց յիթե գրքերն ունեցել են իրենց թըշ-

CLISSITAKU 101787
TIBULUULU 1724
CORNUA 1724
CRATI 1724
LITST 1724
EULI 1724
INTER 1724
CABDT 1724
QUILIB 1724
DEIN 1724
CLISSCA 1724
NIFICA 1724

համաձայն
գտնվածի
մի միջոց
վոր առանց
փորեւ
քիմիական
բաղադրության
լուսանկար
վում ե
կրկնագիր
մագաղաթը

1279

40 450.)

612

նամինները, պակաս չեն յեղել և նրանց բարեկամները: Գրքերի այդ բարեկամները համառու ու տոկուն կերպով, ամենամեծ համբերութեամբ, յեզիպտական գերեզմաններից, Պոմպեյի և Հերկուլանումի փլատակների տակից, վանքերի թագրատարանների ու փոշիների միջից փորոնում հանում և կարգավորում են գրքերը ու այդպիսով գրադարանները հարստացնում նորանոր հայտնաբերություններով:

Գիտնականների այդ անդուլ ջանքերի ու մանրակրկիտ ուսումնասիրութեան արդյունքն է, փորայսոր մենք կարողանում ենք զաղափար կազմել տասնյակ դարեր առաջ ապրող մարդկութեան կուլտուրական կյանքի, նրանց կենցաղի, սովորությունների ու այս կամ այն հարցի շուրջը մզած պայքարի մասին:



Երևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0144069

16274